«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

ԷՋՄԻԱԾՆԻ Վ. ՀԱՄԱՋԱՍՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2023թ.

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 17

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 20

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 34

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 37

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 41

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 44

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 48

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 50

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 52

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 64

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 66

ՆԱԽԱԲԱՆ

Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի (այսուհետ՝ ԷՊՔ, Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմում-հայտին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է ԷՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը նկատի է ունեցել, որ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի համար առաջնային նպատակադրումը միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստումն է, նրանց մրցունակության ապահովումը աշխատաշուկայում: Քոլեջն իր կրթական ծրագրերն իրականացնելիս հետամուտ է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, թափանցիկ և մատչելի ուսումնական գործընթացների իրականացմանը: Ինչ վերաբերում է քոլեջի կողմից սահմանված կրթության բովանդակության միջազգային չափանիշների համադրելիությանը, ապա այս առումով քոլեջը դեռևս ծավալուն աշխատանքներ ունի իրականացնելու՝ հստակեցնելով միջազգայնացման իր տեսլականը:

Հարկ է առանձնացնել, որ նախորդ ռազմավարական շրջափուլում քոլեջն իր առջև դրել է այնպիսի կարևոր հիմնախնդիրների լուծումներ, ինչպիսիք են՝ ՄԿԾ-ների լավարկումը, ՈՆԱ-ի կատարելագործումը, դասախոսական կազմի բարելավումը, կառավարման համակարգի արդյունավետությունը, շենքային պայմանների բարելավումը: Քոլեջը չի գործարկում գործունեության արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ և չափելի ցուցիչներ, որոնցով հնարավոր կլինի հստակ պատկերացում կազմել և արձանագրել դիտարկվող շրջափուլում քոլեջի գործունեության արդյունքային շրջանակը: Հետևաբար, զուտ փորձագիտական գնահատումներով՝ հաշվի առած նաև փորձագիտական այցի ընթացքում դուրսբերված տվյալները, փորձագիտական խումբը նշում է, որ այդ հիմնախնդիրների լուծման տեսանկյունից առկա են որոշակի ձեռքբերումներ, մասնավորապես՝ որոշ ՄԿԾ-ների բարելավումներ, կարճաժամկետում ՈՆԱ համակարգի արդյունավետության բարձրացում, դասախոսական կազմի երիտասարդացում, մրցութային կարգի գործարկում, սակավ ֆինանսական ռեսուրսներով շենքային պայմանների բարելավում: Մինչդեռ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, ֆինանսավորման նոր աղբյուրների բացահայտման, կրթական ծրագրերի բարելավման և ռեսուրսային բազայի վերազինման հարցերում քոլեջը դեռևս հաստատական և ջանադիր աշխատանքներ ունի իրականացնելու:

ԷՊՔ-ն իրականացնում է 9 միջին մասնագիտական կրթական ծրագիր առկա և հեռակա ձևաչափով, որոնք համահունչ են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Քոլեջի արտաքին շահակիցների կարծիքով տարածաշրջանն ունի նաև այլ մասնագետների կարիք՝ գիդեր, գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, խաղողագործներ, գինեգործներ, տարբեր ուղղվածության տեխնոլոգներ: Բացի այդ, քոլեջը նպատակ է ունեցել ներդնել նոր մասնագիտություն՝ «Համակարգչային գեղարվեստական նախագծում», սակայն, հաշվի առնելով քոլեջի նյութատեխնիկական բազան և շենքային պայմանները, ԿԳՄՍ նախարարությունը մասնագիտությունն իրականացնելու լիցենզիա չի տրամադրել: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբն ունի այն մտավախությունը, որ առանց շենքային պայմանների և ռեսուրսների բարելավման քոլեջը հնարավորություն չի ունենա առաջիկայում նոր ՄԿԾ-ներ ներդնել և բարձրացնել մասնագիտական գրավչությունը, ինչը կարող է խոչընդոտել քոլեջի հետագա

զարգացումը։ Խրախուսելի է, որ վերաբացվել է «Ռեժիսուրա» մասնագիտությունը, ուր նկատվում է ուսանողների թվաքանակի ավելացման դինամիկա։ Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ այդ մասնագիտությունը որոշակի աշխուժություն ու հետաքրքրություն է առաջացրել քոլեջի ուսումնական միջավայրում՝ իր կրթական ծրագրի ինքնատիպությամբ, դասախոսներով և ուսանողների բեմադրած ներկայացումներով։ Սակայն նշյալ մասնագիտության զարգացումը ևս կապված է ռեսուրսային բազայի վերզինման հետ։

Փորձագիտական խումբն իր անհանգստությունն է ներկայացնում առ այն, որ չորս տարվա կտրվածքով «Բանկային գործ» մասնագիտության շրջանավարտների շուրջ 60%-ը, «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության շուրջ 30%-ը կրթությունը շարունակել են բուհերում, ըստ ներկայացված տվյալների՝ «Բանկային գործ» ՄԿԾ-ի շրջանավարտների շուրջ 6%-ն է աշխատում, «Սպասարկման կազմակերպում» ՄԿԾ-ում՝ 13%-ը, որի արդյունքում կարող է վտանգվել աշխատաշուկայի կարիքների բավարարումը։ Ինչ վերաբերում է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությանը, ապա այստեղ պատկերն այլ է՝ 4 տարվա տվյալներով շրջանավարտների շուրջ 14%-ն է կրթությունը շարունակել բուհում, ինչին ի հակադրություն՝ շուրջ 9%-ն է աշխատում մասնագիտությամբ։ Նշյալի համատեքստում քոլեջը որոշակի աշխատանքներ ունի իրականացնելու՝ հստակեցնելով տարաշծարջանի գործատուների կարիքները, իր գործունեության վեկտորն ուղղորդելով դեպի ԱՀՈՒ գործընթացների ներդրմանն ու աշխատաշուկայի արագ սպասարկմանը։

Փորձագիտական խմբի դիտարկմամբ Տնտեսագիտության ամբիոնում ընդգրկված թվով 5 ՄԿԾ-ները կառավարման տեսանկյունից դժվարություններ կարող է առաջացնել՝ պայմանավորված մասնագիտական ուղղությունների բազմաբովանդակությամբ, աշխատանքի ծանրաբեռնվածությամբ և մասանգիտությունների արդյունավետ իրականացմամբ։ Քոլեջի պրակտիկաների բազաները բազմազան են, դասախոսի կողմից կիրառվող մեթոդների մեծ մասը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, որի արդյունքում հնարավոր է դառնում հասնել ուսումնառության պլանով նախատեսված նպատակադրումներին։ Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ ԷՊՔ-ն գործուն քայլեր է իրականացնում գնահատման գործընթացը բարելավելու ուղղությամբ, մանավորապես՝ փորձառու դասախոսները գնահատման արդյունավետ մեթոդների վերաբերյալ զեկույցներ են ներկայացնում և դրանք, որպես հաջողված փորձեր, կիրառելի են այլ դասախոսների կողմից։ Չնայած որ քոլեջը միջազգային հաստատությունների հետ ծրագրային բենչմարքինգի փորձեր չի արել, սակայն մեկ կրթական ծրագրի մասով համագործակցել է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի հետ, արդյունքում՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում որոշակի բարելավումներ են իրականացվել։ Ընդհանուր առմամբ, բարելավումներ իրականացվել են նաև այլ ՄԿԾ-ներում, վեր են հանվել ներքին շահակիցների կարիքները, մինչդեռ, աշխատաշուկայի հիմնական շահառուների՝ գործատուների կարիքները չեն ուսումնասիրվել և ընդգրկվել ՄԿԾ-ներում։ Ներկա պայմաններում, ինչպես յուրաքանչյուր քոլեջի, այնպես էլ ԷՊՔ-ի հետագա զարգացումն ուղղակիորեն պայմանավորված է կարճ ժամկետում մրցունակ կադրերի պատրաստմամբ՝ հիմնվելով գործնական կարողությունների թիրախավորման վրա։ Նշյալի համատեքստում քոլեջը դեռևս պլանավորումների իրականացման փուլում է։

Ողջունելի է, որ ԷՊՔ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, վերջին տարիներին պրակտիկ

ոլորտից դասախոսներ են ներգրավվել: Հարկ է առանձնացնել, որ քոլեջի կադրային քաղաքականությունը միտված է երիտասարդ և մասնագիտական ներուժ ունեցող կադրերի համալրմանը, ինչը պայմանավորել է քոլեջում կրթական գործընթացների արդյունավետ իրականացումը: Քոլեջի դասախոսական կազմը կարիք ունի մասնագիտական վերապատրաստումների, ոլորտի այլ մասնագետների հետ համագործակցությունների և փորձի փոխանակման:

Բավականին խնդրահարույց է, որ ԷՊՔ-ի շենքի ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը՝ բարձր, հետևաբար խիստ կարևոր է շինության սեյսմազինվածության բարձրացումը, հատկապես որ քոլեջում անվտանգ ուսումնական միջավայրը գնահատվում է բարձր ռիսկային: Հավելելով՝ ուսանողների թվաքանակի ավելացումը շենքի ծանրաբեռնվածության և անվտանգության տեսանկյունից ևս ռիսկային գործոն է, ուստի շինության անվտանգության հետ կապված աշխատանքները առավել քան հրատապ են: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի գործադրած ջանքերը՝ առկա խիստ սահմանափակ ռեսուրսներով շենքային պայմանների բարելավմանն ուղղված որոշակի աշխատանքների իրականացման ուղղությամբ: Հստակ է՝ այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների բացակայության, սահմանափակ արտաբյուջեի պարագայում քոլեջը չի կարող իրականացնել լայնածավալ և ծախսատար շինարարական աշխատանքներ, հետևաբար փորձագիտական խումբը պնդում է, որ առանց պետության կամ կոնկրետ ներդրողների նպատակային ֆինանսավորման հնարավոր չէ բարելավել քոլեջի շենքային պայմանները:

Փորձաքննության արդյունքներով դուրս է բերվել, որ քոլեջն ունի ռազմավարական կառավարման խնդիրներ՝ պայմանավորված երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների համադրելիության, քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կառավարման հետ: Նշյալի համատեքստում հարկ է ընդգծել՝ անցած ռազմավարական շրջափուլում քոլեջը չի մշակել եկամուտների ձևավորման այլընտրանքային մեխանիզմներ, չի փնտրել ֆինանսավորման նոր աղբյուրներ, չի մշակել հստակ մարտավարություն՝ միտված ռեսուրսային բազայի, շենքային պայմանների ամբողջական բարելավմանն ու վերազինմանը: Ճիշտ է, քոլեջը հստակեցրել է կառավարման համակարգի իր թիրախները, որը կարող է նպաստել առաջիկայում կառավարչական գործընթացների հանարավոր բարելավումներին, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը պետք է ձեռնամուխ լինի արդյունավետ գործելակերպի ներդրմանն ու զարգացմանը՝ ստեղծելով ներդաշնակ գործակցություն ղեկավար կազմի և ներքին, արտաքին շահակիցների միջև:

Գովելի է, որ քոլեջը կարճ ցիկլում կարողացել է գործարկել ՈՆԱ գործընթացները, մասնավորապես՝ ձևավորել է որակի ապահովման փաստաթղթային և գործառնական հենքը: Հատկանշական է, որ կան գրանցված դրական արդյունքներ, այդ գործընթացները շարունակական են և ունեն տրամաբանական շղթա՝ նպաստելով որակի մշակույթի զարգացմանը: Հետազոտության ոլորտում քոլեջը չի մշակել իր հնարավորություններն ու առաջնահերթություններն արտահայտող քաղաքականություն, առանձնացված և դասակարգված չեն հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքները, կուրսային ու նախագծային աշխատանքները: Հետազոտությունը զարգացնելու ուղղությամբ քոլեջը թերևս բավականաչափ խնդիրներ ունի իր առջև դրված՝ սկսած հետազոտության բովանդակության ընկալումից, մինչև հետազոտական աշխատանքներ կատարելու ձևաչափերի մշակումը: ՈՒստի, հետազոտությունը խթանող մեխանիզմների մշակումն ու ներդրումը քոլեջի համար կարևոր նախապայման է: Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ

գործում են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, քոլեջի գործունեությամբ հետաքրքրված կառույցների և մարդկանց համար կրթական միջավայրը հասանելի է ու հրապարակային: Հավելելով՝ գործընկերային համագործակցության շրջանակում քոլեջը վերջին տարիներին ունի իրականացված զգալի աշխատանքներ և ձեռքբերումներ, որոնցից փորձագիտական խումբը հատկապես առանձնացնում է սոցիալական փոփոխություններ իրականացնելու քոլեջի միտումը և գործատուների պահանջարկի ու քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայությունների միջև համապատասխանության խնդիրների դուրսբերումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տարածաշրջանում մրցակցային առավելությունը:
2. Հստակ սահմանված առաքելությունը:
3. Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին միտված ՄԿԾ-ների առկայությունը:
4. Ուսանողների կայուն հոսքը:
5. Երիտասարդ դասախոսական կազմը:
6. Արդյունավետ կադրային քաղաքականությունը:
7. Ներդրված ՈԱ մեխանիզմները:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական կառավարման գործիքակազմի բացակայությունը:
2. Շենքային անբարենպաստ պայմանները:
3. Ուսումնական միջավայրի անվտանգությունը:
4. Նոր ՄԿԾ-ներ ներդնելու հնարավորության բացակայությունը:
5. Այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների բացակայությունը:
6. Հետազոտական բաղադրիչի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ընդլայնել և գործարկել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործիքակազմը:
2. Ներդնել և հստակեցնել ՌԾ-ի գնահատման մեխանիզմները:
3. Մշակել ՌԾ-ի կատարման պլան-ժամանակացույցներ՝ ըստ տարիների և ողջ ռազմավարական շրջափուլի համար:
4. Վերանայել ՌԾ-ի ռազմավարական ուղղությունների ակնկալվող արդյունքները և դարձնել դրանք չափելի:
5. Հստակեցնել ներքին և արտաքին միջավայրերի պահանջները՝ հիմքում դնելով հավաստի տվյալներ:

Կառավարումն ու վարչարարությունը

6. Ներդնել արդյունքահենք կառավարում՝ մշակելով և գործարկելով ռազմավարական կառավարման գործիքակազմ։
7. Կանխորոշել ներքին և արտաքին ռիսկերի շրջանակը և ներդնել ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմներ։
8. Գործարկել ֆինանսավորման նոր բանաձևեր՝ մշակելով ռեսուրսային բազան բարելավելու հստակ մարտավարություն։
9. Ապահովել ներքին շահակիցների մասնակցային կառավարումը քոլեջի գործունեությանը։
10. Համահնչեցնել պլանավորում-իրականացում, գնահատում-բարելավում շղթաները։
11. Տարեկան գործողությունների պլանը բխեցնել ՌԾ-ից։
12. Մշակել գործունեության արդյունավետությունը գնահատող և մշտադիտարկող մեխանիզմներ։
13. Իրականանցնել գործունեության համապարփակ ներքին գնահատում։

Մասնագիտության կրթական ծրագրերը

14. Մշակել գործնական հմտություններ և կարողություններ ձևավորող առաջադրանքների փաթեթներ ըստ առանձին մոդուլների։
15. ՄԿԾ-ների կառավարման գործընթացը համահնչեցնել աշխատաշուկայի կարիքներին։
16. Մշակել մասնավոր հատվածի հետ համագործակցության նոր ձևաչափեր՝ ներգավելով ՄԿԾ-ների բարելավման գործընթացներում։
17. Հստակեցնել և տարբերակել պրակտիկաների բազաները և վերջնարդյունքները ըստ մասնագիտութունների։
18. Սպասարկման կազմակերպում ՄԿԾ-ի շրջանակում համահնչեցնել մասնագիտական մոդուլների վերջնարդյունքներն ու մասնագիտության զբաղմունքի նկարագիրը։
19. Բարելավել գնահատման համակարգը՝ կարևորելով գործնական հմտությունների գնահատումը։

Ուսանողները

20. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի շարունակականությունը ուսանողների խնդիրների վերհանման գործընթացներում։
21. Ապահովել բոլոր մասնագիտությունների գծով հետազոտական-վերլուծական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը։
22. Հստակեցնել ՈՒԽ-ի իրավասությունների շրջանակը։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

23. Մշակել դասախոսների պաշտոնի անձնագրեր՝ հստակեցնելով նրանց ներկայացվող մասնագիտական պահանջները։
24. Կրթական կարիքներից ելնելով՝ կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ։
25. Ձևավորվել կադրային բազա՝ ներգրավելով հնարավորինս շատ պրակտիկ մասնագետներ։

26. Մշակել խրախուսման արդյունավետ մեխանիզմներ հիմքում դնելով դասախոսների գնահատումը։
27. Ամբողջականացնել և գործարկել դասախոսների գնահատման մեխանիզմները։

Հետազոտությունը և զարգացումը

28. Ներդնել հետազոտությունը խթանող մեխանիզմներ և ընթացակարգեր։
29. Վերանայել նախագծային աշխատանքների պատրաստման և իրականացման կանոնակարգը և նախագծային աշխատանքների իրականացումը համապատասխանեցնել դրան։
30. Հստակ տարանջատել վերլուծական, հետազոտական բնույթ կրող առաջադրանքների, գործնական, կուրսային, նախագծային աշխատանքների բովանդակային և կառուցվածքային տարբերությունները։
31. Ներդնել և զարգացնել կուրսային և հետազոտական բաղադրիչ պարունակող այլ աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմները։
32. Բոլոր մասնագիտություններում ներդնել հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ և աշխատանքներ։ Իրականացնել համագործակցային հետազոտական աշխատանքներ։
33. Մշակել և ներդնել դասախոսների հետազոտական բնույթի աշխատանքերի իրականացման խրախուսման մեխանիզմներ։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

34. Գնահատելով ուսումնական միջավայրի անվտանգության ռիսկերը՝ հրատապ մարտավարություն մշակել շենքային պայմանների և ռեսուրսների բարելավման ուղղությամբ։
35. Այլընտրանքային եկամուտների աղբյուրներ գտնել։
36. Գնահատել ուսանողների խմբերի քանակ-լսարանների քանակ հարաբերակցությունը, առկա շենքային պայմանները հաշվի առնելով՝ մշակել կրթական գործընթացի կազմակերպման առավել օպտիմալ տարբերակներ։
37. Ռեսուրսատար մասնագիտությունների համար ապահովել անհրաժեշտ սարքավորումներն ու նյութական ռեսուրսները։
38. Նոր համագործակցություններ ձեռքբերել գործատուների հետ՝ նրանց ռեսուրսների համատեղ օգտագործման նպատակով։

Հասարակական պատասխանատվությունը

39. Ներդնել հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ։
40. Բարելավել հետադարձ կապի ապահովման և հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմները։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

41. Մշակել ժամանակացույց օտար լեզուների շարունակական բարելավման ուղղությամբ։

42. Ակտիվացնել միջազգային համագործակցային ծրագրերը՝ դարձնելով դրանք առավել գործնական:
43. Մշակել և կիրառել գործատուների հետ համատեղ աշխատելու արդյունավետ մոդել:

Որակի ներքին ապահովման համակարգը

44. ՈՆԱ գործընթացներում մեծացնել արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը:
45. Լավարկել տվյալների համավաքրման գործող մեխանիզմները:
46. Մշակել և ներդնել ՈՆԱ գործընթացների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներ:
47. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական գործարկումը:

Ամսաթիվ՝ 31.07.2023 թ.

_____

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Միհերյան**-Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի Եվրոպական համալսարան, Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Քրիստինե Հակոբյան**-Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
3. **Նարինե Մեսրոպյան**–ՀՀ ԿԳՍՄ ԿՏԱԿ, հեռավար ուսուցման կազմակերպման և էլեկտրոնային ուսուցման բաժնի պետ, փորձագիտական խմբի անդամ:
4. **Կարինա Գանապետյան** – Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ, 2-րդ կուրսի ուսանողուհի, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քարտուղարության բաժնի մասնագետ՝ Լիլիթ Ղազարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և գործընթացի համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԷՊՔ–ն 16.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափին համապատասխան դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (27.01.2023թ.) ԷՊՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ԷՊՔ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել

քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: 4-օրյա աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները և կապը չափորոշիչների հետ: Ուսումնական հաստատությունն իրականացրել է SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

ԷՊՔ-ն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 31.03.2023թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 20 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի, ուսանողների կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է քոլեջի աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները: Ինքնավերլուծությունը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, ինչը որոշ դեպքերում հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

ԷՊՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր Քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակրգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[1]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական հանդիպումներ և այլն:

Մասնագիտական հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ Քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախանական գնահատում

Հաշվի առնելով այն փաստը, որ ԷՊՔ-ն գտնվում է Արմավիրի մարզում՝ Քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց փորձագիտական այցից առաջ: Հանդիպմանը ներկա են եղել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում Քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. մայիսի 15-18-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (14.03.2023թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել Քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ հունիսի 30-ին:

Համակարգողի ստորագրությունը

31.07.2023թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պատմություն. Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջը /նախկինում Էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկում/ իր գործունեությունը սկսել է 1969 թվականից: «Գրադարանային գործ» և «Ակումբային միջոցառումների ռեժիսուրա» մասնագիտությունների գծով: Մի քանի տարի անց ավելացրել են նաև «Բրոշյուրավորման, կազմարարական արտադրության տեխնոլոգիա», «Ժողովրդական գործիքների ինքնագործ խմբի կազմակերպում» մասնագիտությունը: Տեխնիկումը, լինելով միակը իր մասնագիտությունների ցանկով /առկա և հեռակա ուսուցմամբ/, դիմորդներ էր ունենում հանրապետության բոլոր շրջաններից և հարևան հանրապետությունների հայաշատ վայրերից՝ ճանաչվելով, որպես հայտնի ռեժիսորներ, երաժիշտներ ու գրադարանավարներ: 1992թ. տեխնիկումի տնօրինության ջանքերով Արցախում բացվեց մասնաճյուղ: 1994թ. մշակութային մասնագիտությունները համալրվեցին մանկավարժական բաժիններով՝ «Դասավանդում տարրական դասարաններում», ապա նաև՝ «Հայոց լեզվի դասավանդում», «Ռուսաց լեզվի դասավանդում», «Անգլերեն լեզվի դասավանդում»: 2000թ. Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարության 13.12 1999 թվականի համար 2/7 որոշմամբ՝ Էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկումը վերանվանվեց Էջմիածնի պետական քոլեջ: 2007 թվականին /29.05.2007թ հրաման11/ քոլեջը անվանակոչվել է կրթության, մշակույթի անվանի գործիչ Վարդգես Համազասպյանի անունով՝ դառնալով Էջմիածնի Վարգես Համազասպյանի անվան պետական քոլեջ:

***2.* Կրթություն.** ԷՊՔ-ում սովորողների ուսուցմը կազմակերպում է հիմնական, միջնակարգ հանրակրթական, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական, առկա և հեռակա ուսուցմամբ. գործում են նաև կարճաժամկետ ծրագրեր: Ժամանակի պահանջներից քոլեջի մասնագիտությունների ցանկը մշակութամանկավարժական ուղղվածությունից ուղվեց դեպի տնտեսագիտական:

ԷՊՔ-ն իրականացնում է 9 միջին մասնագիտական կրթական ծրագիր առկա և հեռակա ձևաչափով՝ «Առևտուր», «Սպասարկման կազմակերպում», «Բանկային գործ», «Գյուղատնտեսագիտություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Ռեժիսուրա», «Նախադպրոցական կրթություն», «Գրադարանային գործ» և «Հաշվապահական հաշվառում»: «Ռեժիսուրա» և «Գյուղատնտեսագիտություն» ՄԿԾ-ները վերաբացվել են համապատասխանաբար 2020-2021 և 2018-2019 ուստարիներին՝ նախկինում եղած լիցենզիաների հիման վրա:

ԷՊՔ-ի կարևորագույն խնդիրներից է որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման, համալրման, զարգացման և սահուն սերնդափոխության իրականացումը: Քոլեջն իր հնարավորությունների և մեծ ջանքերի շնորհիվ փորձում է հնարավորինս ապահովել ժամանակակից կրթություն:

***3.* Հետազոտություն.** Համաձայն ԷՊՔ գործող ռազմավարական ծրագրի՝ Քոլեջը ձգտում է ձևավորելու միջավայր, որը հնարավորություն կստեղծի ներքին շահակիցների ինքնակրթվելու և զարգանալու, այդ նպատակով ներդրվել է հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն, որը

նկարագրում է Քոլեջի հետաքրքությունները հետազոտական ոլորտում:
4. **Միջազգայնացում.** Քոլեջը ռազմավարական նոր ծրագրով շեշտադրում է արտաքին կապերի ընդլայնումը և միջազգայնացման գործընթացները՝ դրանց համար առանձնացնելով հստակ սահմանված գործողություններ, որոնք հնարավորություն կտան հետագայում ունենալ գործընկերների լայն և բազմազան շրջանակ, ինչպես նաև կնպաստեն հաստատության միջազգայնացմանը: Ներկայումս մշակման փուլում է Քոլեջի կայքէջի պատրաստումը, ինչը կնպաստի արտաքին կապերի հաստատմանը, համագործակցությանը և միջազգայնացմանը:
5. **Որակի ապահովում.** ԷՊՔ-ում որակի ապահովման գործընթացները մեկնարկվել են 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից և որպես հիմնարար խնդիր ըմդգրկվել է 2018-2023թթ. Ռազմավարական ծրագրում: ԷՊՔ-ի կողմից կարևորելով որակի ապահովման գործընթացների նշանակալի դերը քոլեջի հաջողության և զարգացման գործում՝ 2023-2028թթ. Ռազմավարական ծրագրում սահմանվել են որակի ապահովման այնպիսի նպատակներ և խնդիրներ, որոնք կնպաստեն որակի ապահովման համակարգի լիարժեք կայացմանը և ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը: Վերջինս իր դրական ազդեցությունը կունենա քոլեջի հետագա մարտահրավերների հաղթահարման, ներքին և արտաքին շահակիցների կառավարման, ներքին և արտաքին միջավայրերի ազդակների ճիշտ հասցեագրման և դրանք ի նպաստ քոլեջի կիրառելու գործընթացում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի (այսուհետ՝ ԷՊՔ) 2018-2022թթ. Ռազմավարական ծրագրով (այսուհետ՝ ՌԾ) սահմանված առաքելության համաձայն՝ քոլեջը ապահովում է միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստումը, նրանց մրցունակության ապահովումը աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանաջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունը և հավասարությունը: Դիտարկվող՝ 2018-2022թթ. ՌԾ-ի շրջափուլում կրթության միջազգային չափանիշներին համադրելի բովանդակությամբ ՄԿԾ-ների իրականացում քոլեջին չի հաջողվել ապահովել: Նշյալ առաքելության համապատասխան քոլեջի ՌԾ-ով սահմանված են նաև քոլեջի տեսլականը, հիմնարար արժեքները: ՌԾ-ով առանձնացված են 9 հիմնախնդիր, որոնցից հարկ է առանձնացնել՝ կրթական ծրագրերի վերափոխում, ՈՆԱ-ի կատարելագործում, դասախոսական կազմի բարելավում և համալրում, կառավարման արդյունավետության բարձրացում, ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների բացահայտում, շենքային պայմանների բարելավում: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերոշարադրյալ հիմնախնդիրների լուծումը դրված է եղել քոլեջի գործողությունների առաջնահերթություններում: ՌԾ-ի կատարողականի բացակայությամբ պայմանավորված՝ հիմնախնդիրների լուծման արդյունքում առկա ձեռքբերումները քոլեջը միայն բանավոր մակարդակում է ներկայացնում: Փորձագիտական այցի տվյալներով նշյալ հիմնախնդիրների լուծման տեսանկյունից քոլեջը հաջողություններ է գրանցել դասախոսական կազմի բարելավման և երիտասարդացման, ՈՆԱ համակարգի ներդրման և կարճ ցիկլում ՈԱ գործընթացներում արդյունքի ապահովման, առկա սահմանափակ ֆինանսական ռեսուրսների շպարագայում կրթական միջավայրի պայմանների որոշակիորեն բարելավման հարցերում:

Հարկ է նշել, որ 2018-2022թթ. ՌԾ-ի գործողության ժամկետն արդեն ավարտվել է, և ռազամավարական նոր շրջափուլի համար քոլեջն արդեն-իսկ մշակել է 2023-2028թթ. ՌԾ-ի նախնական տարբերակը, որի գլխավոր նպատակն է՝ հավասարակշռել քոլեջի ներքին և արտաքին միջավայրերը և այդ հավասարակշռությունը պահպանել երկարաժամկետ կտրվածքով[1]: Ըստ քոլեջի կողմից ներկայացված տեղեկատվության՝ ռազմավարական նախորդ շրջափուլով սահմանված առաքելությունը վերասահմանվել է՝ թիրախավորելով ներքին և արտաքին միջավայրերի պահանջները, գործընթացների իրականացման և արդյունքների ձեռքբերման տեսանկյունից դառնալով առավել չափելի, վերասահմանվել են նաև քոլեջի ռազմավարական

[1] ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԵԼ Է ՔՈԼԵՋԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

հիմնական ուղղությունները, նպատակներն ու խնդիրները։ Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարաձավ, որ և՛ նախորդ ՌԾ-ում, և՛ նոր ՌԾ-ում առաքելությունը բառացիորեն կրկնվում է, քոլեջի հիմնական ռազմավարական ուղղություններն ու նպատակներն ընդամենը համախմբվել են, 2023-2028թթ. ՌԾ-ով սահմանված ռազմավարական ուղղությունները (նպատակներ, խնդիրներ) ունեն նախատեսված գործողություններ, ակնկալվող արդյունքներ, պատասխանատուներ, կատարման ժամկետներ։ Փորձագիտական խումբը նշում է, որ ակնկալվող արդյունքները ձևակերպման մեջ ավելի շատ գործողություն են և չափելի չեն, օրինակ՝ գործողությունների և ռազմավարական ծրագրի միջև համապատասխանություն ապահովում, պլանավորման և գործողությունների իրականացման գնահատման առավել կանոնակարգված մոտեցում, Ֆինանսական միջոցների պլանավորում և բաշխում առավելագույնս ներքին միջավայրի պահանջների հիման վրա, վերանայվող կրթական ծրագրերի մրցունակության բարձրացում և այլն։ Ինչ վերաբերում է ներքին և արտաքին միջավայրերի պահանջների թիրախավորմանը համարժեք առաքելության վերասահմանմանը, ապա դրանք արտացոլված չեն 2023-2028թթ. ՌԾ-ում։

Ռազմավարական նոր շրջափուլում քոլեջը, ըստ 2023-2028թթ. ՌԾ-ում նախանշված 6 ռազմավարական ուղղությունների (Կառավարում և վարչարարություն, Մասնագիտության կրթական ծրագեր, Մարդկային և նյութական ռեսուրսներ, ՈՒսանողական համակազմ, Շրջանավարտների հետ հետադարձ կապ, Արտաքին կապերի ստեղծում և ընդլայնում, Որակի ներքին և արտաքին ապահովում) որդեգրել է ռազմավարական կառավարման մոտեցում, որը միտված է լինելու քոլեջի գործունեության արդյունավետ կառավարմանը, մարդկային և նյութական ռեսուրսների նպատակային բաշխմանն ու կառավարմանը, դրանց կիրառմանը՝ ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռազմավարական կառավարման գործիքակազմը դեռևս մշակված չէ քոլեջի կողմից։

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացները քոլեջը դեռևս չի ամբողջականացրել և համակարգել։ Ներքին շահակիցների շրջանում հարցումներն իրականացվում են վերջին 2 կիսամյակի կտրվածքով, արտաքին շահակիցների հետ ևս քննարկումներ, ֆոկուս-խմբային հանդիպումներ իրականացվել են մեկ կիսամյակի կտրվածքով, ուստի ներքին և արտաքին շահակիցների համաընդգրկուն կարիքները ամբողջությամբ ընդգրկված չեն 2023-2028թթ. ՌԾ-ում, չնայած որ քոլեջը վերասահմանել է իր առաքելությունը՝ թիրախավորելով ներքին և արտաքին միջավայրերի պահանջները։ Միևնույն ժամանակ պարզվեց, որ առկա չեն հավաստի տվյալներ, որոնք կդրվեն ներքին և արտաքին միջավայրերի պահանջների գնահատման հիմքում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքրն շահակիցները 2023-2028թթ. ՌԾ-ի մշակման աշխատանքներին էական մասնակցություն չեն ունեցել։

2018-2022թթ. ՌԾ-ի պլան-ժամանակցույց և կատարողականն առկա չէ։ 2023-2028թթ. ՌԾ-ի պլան ժամանակցույցը ևս մշակված չէ քոլեջի կողմից։ Բացի այդ, առկա չեն արդյունքների գնահատման ցուցիչներ, որով հնարավոր կլիներ գնահատել ՌԾ-ն։ Առկա են քոլեջի գործողությունների համալիր պլաններ, որոնց արդյունքները որոշակիորեն ամփոփված են 2020-2021, 2021-2022 ուստարիների քոլեջի տնօրենի տարեկան հաշվետվություններում, ուր տարեկան կտրվածքով ամփոփված չեն բարելավման ենթակա խնդիրները, սահմանված չեն թիրախային արդյունքները։ Հարկ է նշել, որ նոր ռազմավարական շրջափուլում քոլեջը նախատեսում է իրականացնել գործընթացների գնահատում։ Առկա են քոլեջի բոլոր ստորաբաժանումների տարեկան պլաններն ու կիսամյակային,

տարեկան հաշվետվությունները։ Քոլեջն իրականացրել է 2021-2022 ուստարվա Ներքին գնահատում, որն ընդգրկում է միայն ռեսուրսների և շենքային պայմանների վերաբերյալ տեղեկատվություն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԷՊՔ-ի՝ ինչպես 2018-2022թթ. ՌԾ-ով, այնպես էլ՝ 2023-2028թթ. ՌԾ-ով սահմանված առաքելությունն ունի ընկալելի ձևակերպում և ուղղակիորեն շեշտադրվում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստումը։ Նախորդ ռազմավարական շրջափուլում քոլեջին չի հաջողվել ՄԿԾ-ներն իրականացնել կրթության միջազգային չափանիշներին համադրելի բովանդակությամբ, ուստի փորձագիտական խումբն ընդգծում է, որ միջազգայնացման տեսանկյունից քոլեջը հավակնոտ նպատակադրում է սահմանել։ Վերոնշյալով պայմանավորված՝ հարկ է ընդգծել, որ 2023-2028թթ. ՌԾ-ով սահմանված առաքելությամբ ևս կրթության միջազգային չափանիշներին համադրելի բովանդակության ապահովումը ռազմավարական նպատակ է, որի իրականացումը կարող է վտանգվել, եթե միջազգայնացման ուղղությամբ քոլեջի կողմից գործուն քայլեր չիրականացվեն։ Գովելի է, որ նոր ՌԾ-ում քոլեջը ձգտել է վերասահմանել առաքելությունը՝ թիրախավորելով ներքին և արտաքին միջավայրերի պահանջները և արդյուքների ձեռքբերման տեսանկյունից դառնալ առավել չափելի։ Միաժամանակ, փորձաքննության արդյունքները ցույց են տալիս, որ և՛ նախորդ, և՛ նոր ՌԾ-ում առաքելության, ռազմավարական հիմնական ուղղությունների, նպատակների ձևակերպումներում էական փոփոխություններ առկա չեն։ Դեռևս մշակված չէ ՌԾ-ի պլան-ժամանակացույցը, որը կարող է խոչընդոտել նոր ռազմավարական շրջափուլում նպատակադրումների արդյունավետ իրականցմանը և վերահսկմանը։

Դրական դիտարկում է, որ 2018-2022թթ. ՌԾ-ով սահմանված հիմնախնդիրները շոշափում են այնպիսի թիրախային խնդիրներ, ինչպիսիք են՝ կրթական ծրագրերի վերափոխումը, ՈՆԱ-ի կատարելագործումը, դասախոսական կազմի բարելավումը, կառավարման համակարգի արդյունավետությունը, քոլեջի համար ներկայումս հրատապ խնդիր համարվող շենքային պայմանների բարելավումը։ Քաջալերելի է, որ քոլեջը գնահատել և գործողությունների առաջնահերթություններում ներառել է իր գործունեության առաջնային հիմնախնդիրները, այդ հիմնախնդիրների լուծման տեսանկյունից ունի որոշակի ձեռքբերումներ, սակայն գործունեության արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների և չափելի ցուցանիշների բացակայության պարագայում հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել և արձանագրել դիտարկվող շրջափուլում քոլեջի գործունեության արդյունքային շրջանակը։

Խրախուսելի է, որ քոլեջը 2023-2028թթ. ՌԾ-ում նախանշված 6 ռազմավարական ուղղությունների վեկտորն ուղղել է գործունեության արդյունավետ կառավարմանը, մարդկային և նյութական ռեսուրսների նպատակային բաշխմանն ու կառավարմանը, դրանց կիրառմանը՝ ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների։ Փորձագիտական խումբը նշում է, որ ռազմավարական կառավարման համարժեք գործիքակազմի մշակումը կնպաստի նշյալ գործընթացներից արդյունքի ապահովմանը, միևնույն ժամանակ, քոլեջը դեռևս հետևողական և ջանադիր աշխատանքներ ունի իրականացնելու կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, ֆինանսավորման նոր աղբյուրների բացահայտման, կրթական ծրագրերի բարելավման և ռեսուրսային բազայի վերազինման հարցերում։

Թեև քոլեջը դեռևս ամբողջովին չի համակարգել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացները, այդուհանդերձ կարճ ժամկետում ձեռնամուխ է եղել ներքին, արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործիքների մշակմանն ու կիրառմանը՝ ընկալելով և ընդգծելով շահակիցների կրթական կարիքները: Սակայն հարկ է առանձնացնել, որ այդ գործիքները կիրառվել են կարճ ցիկլով, ուստի ներքին և արտաքին շահակիցների համաընդգրկուն կարիքները ամբողջությամբ չեն կարող ընդգրկված լինել 2023-2028թթ. ՌԾ-ում, բացի այդ՝ առկա չեն հավաստի ամփոփ տվյալներ, որոնք կդրվեն ներքին և արտաքին միջավայրերի պահանջների գնահատման հիմքում: Հետևաբար, քոլեջի համար խիստ առաջնային է ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և գնահատման, տվյալների հավաքագրման և վերլուծության գործիքակազմի ամբողջականացումը, պարբերաբար և արդյունարար կիրառումը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է համարվում, որ քոլեջի գործողությունների համալիր պլանների արդյունքները որոշակիորեն ամփոփված են քոլեջի տնօրենի տարեկան հաշվետվություններում, առկա են քոլեջի բոլոր ստորաբաժանումների տարեկան պլաններն ու կիսամյակային, տարեկան հաշվետվությունները, իրականացվել է ռեսուրսների ներքին գնահատում, սակայն բարելավման ենթակա խնդիրների թիրախավորումը կարող է նպաստել դրանց ամփոփմանն ու պլանային ժամանակահատվածում նախատեվող գործընթացներում ներառմանն ու լուծմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և աշխատաշուկայի կարիքների բավարարմանը միտված առաքելություն, ռազմավարական նոր շրջափուլում քոլեջը ձգտում է թիրախավորել ներքին և արտաքին միջավայրերի պահանջները և արդյունքների ձեռքբերման տեսանկյունից հստակ գնահատել և գործողությունների առաջնահերթություններում ներառել է իր գործունեության առաջնային հիմնախնդիրները, կարճ ժամկետում ձեռնամուխ է եղել ներքին, արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործիքների մշակմանն ու կիրառմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ԷՊՔ-ն, որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, լիազորված պետական կառավարման մարմինը, քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը: Խորհուրդն

ունի 11 անդամից բաղկացած նոր կազմ, որոնք ընտրվել են 2022թ. հուլիսին, միայն խորհրդի նախագահն է նախորդ խորհրդի անդամ, մյուսներն ամբողջությամբ նոր են ներգրավվել քոլեջի կառավարման գործընթացում:

Քոլեջում գործում են մանկավարժական խորհուրդը, ուսանողական խորհուրդը, քոլեջը չունի ուսումնամեթոդական խորհուրդ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնամեթոդական խորհրդի գործառույթներն իրականացվում են մանակավարժական խորհրդի, ամբիոնների կողմից: Քոլեջի կանոնադրությամբ սահմանված են քոլեջի գործունեության շրջանակը, նպատակները, առանձնացված է գործունեության հիմնական առարկան, այն է՝ միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը: Քոլեջի գործադիր մարմինը տնօրենն է, ով ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով ու քոլեջի կանոնադրությամբ տնօրինում է քոլեջի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները: Տնօրենն ընտրվել է իր պաշտոնին 2023թ. մայիսին և իր պաշտոնավարման 2-րդ շրջափուլն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրենի պաշտոնավարման նախորդ շրջափուլում քոլեջում տեղի ունեցող գործընթացներից ամփոփումներ առկա չեն: Դրանք ներկայացվում են ընդամենը բանավոր մակարդակում, օրինակ՝ կառավարման մոդելի փոփոխություն, կառուցվածքային բարելավումներ, կրթության որակի ապահովման նոր հեռանկարների սահմանում և այլն:

2018-2022թթ. ՌԾ-ի հիմնախնդիրների շարքում է կառավարման արդյունավետության ու վարչական ծառայությունների որակի բարձրացումը: Նշյալ հիմնախնդրի լուծման համար քոլեջն առանձնացրել է հետևյալ կետերը՝ հստակեցնել լիազորությունների ու պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև, զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել կառուցողական համագործակցության զարգացումը քոլեջի կառավարման, ուսանողնական, տնօրինական և այլ խորհուրդների միջև: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կառավարման արդյունավետության և վարչական ծառայությունների որակի բարձրացման վերոնշյալ կետերի հետ կապված քոլեջն իրականացրել է որոշակի գործընթացներ, մասնավորապես՝ կառավարչական գործընթացներն ամփոփող փաստաթղթային հենքն առկա է, մշակված են կանոնակարգերը, ընթացակարգերը, պաշտոնների անձնագրերը (բացի դասախոսների պաշտոնների անձնագրերի): Ձևավորված է ՈՒԽ-ի կանոնադրությունը, հստակեցված են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, քոլեջի խորհուրդների, ստորաբաժանումների միջև կառուցողական համագործակցության զարգացումը փաստող ամփոփումներ և գնահատումներ առկա չեն: 2023-2028թթ. ՌԾ-ով նույնպես ռազմավարական ուղղությունն է սահմանված Կառավարումը և վարչարարությունը, ընդ որում՝ կառավարման գործընթացի շրջանակում նպատակադրում է կառավարման համակարգի բարելավումը, առանձնացված են հետևյալ խնդիրները՝ ստեղծել ներքին գնահատման կայուն համակարգ, բարելավել ՊԻԳԲ ինստիտուցիոնալ մոտեցումները, բարելավել նյութական և ֆինանսական ռեսուրսների կառավարման գործընթացները, նպաստել ներքին և արտաքին շահակիցների արդյունավետ ներգրավվածությանը որոշումների կայացման գործընթացում: Քոլեջը կարևորում է առաջիկա 5 տարվա համար կառավարման ոլորտում սահմանված հավակնությունների և ակնկալվող արդյունքների իրագործումը: Օրինակ՝ ակնկալվող արդյունքներ են՝ մշակվելիք ԳԱՑ-երի համար տվյալահեն հենք, քոլեջի ներքին միջավայրի վերաբերյալ տեղեկության վերհանում և գնահատում, պլանավորման և գործողությունների իրականացման գնահատման առավել կանոնակարգված մոտեցում, բարելաման գործընթացների կանոնակարգված և հստակ մոտեցում,

ֆինանսական միջոցների պլանավորում և բաշխում առավելագույնս ներքին միջավայրի պահանջների հիման վրա և այլն: Հարկ է նշել՝ վերոնշյալներն ավելի շատ գործողություններ են, մոտեցումներ, որոշակի քաղաքականություն, քան՝ արդյունքներ:

Քոլեջի հիմնական եկամուտները ձևավորվում են պետությունից տրամադրված պաշտոնական դրամաշնորհների հաշվին, որոնք 2023թ. տվյալներով կազմում են ընթացիկ եկամուտների շուրջ 70%-ը: Մնացած 30%-ը կազմում են ուսանողների վարձավճարները: Հարկ է առանձնացնել, որ քոլեջում ուսման վարձերը բարձրացել են 65%-ով, ինչը նպաստել է եկամուտների ավելացմանը և ուղղվել աշխատավարձերի բարձրացմանը: Ծախսային հոդվածներում գերակշիռ մաս են կազմում աշխատանքի վարձատրության ծախսերը՝ կազմելով ընդամենը ծախսերի շուրջ 82%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսավորման նոր բանաձևերի կիրառման համատեքստում քոլեջը նոր մոտեցումներ չի ցուցաբերել:

Դասախոսներն ու ուսանողները իրենց մասնակցությունն ունեն Կառավարման խորհրդի գործունեությանը, մասնակցում են նիստերին, հարցերի քննարկմանը, քվեարկություններին, սակայն օրակարգում ընդգրկված հարցերի ձևակերպմանը անմիջական մասնակցություն չունեն՝ որպես քոլեջի անմիջական շահառուներ: Ըստ ինքնավերլուծության՝ ԿԽ-ում միայն տնօրենն է ներկայացնում հարցեր, քանի որ նա ներկայացնում է այնպիսի հարցեր, որոնք անմիջականորեն կապված են քոլեջի գործունեության հետ՝ ներառյալ դասախոսների, ուսանողների վերաբերյալ հարցեր և այլն: Փորձագիտական այցից ևս պարզ դարձավ, որ ԿԽ-ում բարձրացված և քննարկված հարցերի շրջանակում հիմնական մասնակիցը քոլեջի տնօրենն է, որոշ դեպքերում՝ ԿԽ նախագահը:

Քոլեջի գործունեության իրականացման հիմքում դրված են 2018-2022թթ. ՌԾ-ն, 2023-2028թթ. ՌԾ-ն, 2021-2022, 2022-2023 ուստարիների քոլեջի գործողությունների համալիր պլանները: ՌԾ-ի և գործողությունների համալիր պլանների համադրության արդյունքում պարզ դարձավ, որ դրանք ընդհանրության մեջ համահունչ չեն, գործողությունների պլաններում ներառված գործընթացների շղթան ՌԾ-ով սահմանված առաջնահերթությունների տրամաբանական հաջորդականության մեջ չէ: Բացի այդ, 2021-2022 ուստարվա գործողությունների պլանում նախանշված են ուսումնական, կազմակերպադաստիարակչական, տնտեսական, ուսումնաարտադրական պրակտիկաների, մեթոդական աշխատանքների, որակի ապահովման, կարիերայի հետ կապված թվով 152 գործողություն, նշված են միայն կատարման ժամկետները, պատասխանատուների և այդ գործողություններին կատարման վերաբերյալ արդյունքներ չկան: 2022-2023 ուստարվա գործողությունների պլանում նախանշված են պատասխանատուները, ըստ պլանի կատարման ժամկետներըը: Առկա է 118 գործողություն: Նշյալ գործողությունների պլանների կատարողականները բացակայում են: Առկա են բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները, որոնք նույնպես պլանավորում- իրականացում կապի մեջ համադրելի չեն:

Քոլեջում առկա են 2020-2021թթ., 2021-2022թթ. ամբիոնների աշխատանքային պլաններ, մասնավորաբար՝ 2021-2022թթ., 2022-2023թթ. Տնտեսագիտության ամբիոնի աշխատանքային պլաններում առաջադրված խնդիրները 9 կետով բառացի կրկնվում են, հստակ չէ նախորդ տարվա ձեռքբերումներն ու բարելավման խնդիրները ինչպես են արտացոլվել ամբիոնի աշխատանքային պլանում: Գործընթացների պլանավորման և իրականացման շղթայի վերահսկման մակարդակում մշտադիտարկման մեխանիզմներ չեն գործում, քոլեջը չի մշակել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների գնահատման մեխանիզմներ, շեշտադրված չեն վերհանված հիմնավոր խնդիրների

ամփոփման և առաջիկա պլաններում ներառման գործիքները: Առկա է տնօրենի տարեկան հաշվետվությունը, ուր ամփոփված է քոլեջի տարեկան գործունեությունը, տարվա ընթացքում կարևոր ձեռքբերումներն ու բարելավման ենթակա խնդիրները համակարգված ներկայացված չեն:

Քոլեջն իրականացրել է 2021-2022 ուստարվա ներքին գնահատում, որի ուսումնասիրության օբյեկտը քոլեջի ռեսուրսային բազան է (իրականացվել է դեռևս 1 անգամ): Քոլեջը հավաքագրել է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, միևնույն ժամանակ չի ուսումնասիրել և առանձնացրել իր գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնները և դրանցով պայմանավորված ռիսկերի կառավարման գործիքակազմ ևս մշակված չէ[2]:

ԷՊՔ-ի կառավարման մակարդակում ՊԻԳԲ-ն դեռևս պլանավորում-իրականացում շրջափուլում է, վերջին 1 տարվա ընթացքում որոշ գնահատումներ են իրականացվել, բարելավումները տեսանելի չեն, բարելավման ենթակա խնդիրները պլանավորումներում ևս տեսանելի չեն:

2021թ. շրջանավարտների հարցման արդյունքներով շրջանավարտների 50%-ն է բավարարված քոլեջում ստացած կրթությունից, 50%-ը՝ մասամբ են բավարարված: Նշյալ հարցման արդյուքներով շրջանավարտները աշխատելու ընթացքում զգացել են հաղորդակցման հմտությունների, թիմում աշխատելու հմտությունների և ժամանակի կառավարման հմտությունների պակաս: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտների նախանշած հմտությունները դեռևս չեն ներդրվել ՄԿԾ-ների բարելավումներում՝ որպես արտաքին շահակիցների կողմից վերհանված կրթական կարիքների դրսևորումներ: Հարցումները 2 կիսամյակ է, ինչ կիրառվում է քոլեջում, գործատուների հետ ընդամենը 1 հանդիպում է իրականացվել, ուր քննարկվող հարցերը դեռևս արդյունարար լուծումներ չունեն, մասնավորապես՝ ուսանողների գործնական հմտությունների բարելավում, ստեղծագործ մտածողության զարգացում, գործատուների հետ համատեղ նախագծերի իրականացում և այլն:

Քոլեջի կայքէջը բարելավվում է, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն զետեղված է քոլեջի ֆեյսբուքյան էջում:

Դատողություններ: Դրական է, որ քոլեջն ընդգծել է իր գործունեության շրջանակը, նպատակները՝ գործունեության հիմնական առարկա համարելով միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, որով պայմանավորված հստակեցված են քոլեջի կառավարման համակարգի թիրախները՝ նպաստելով առաջիկայում կառավարչական գործընթացների հանարավոր բարելավումներին:

Դիտարկելով նախորդ ռազմավարական շրջափուլում քոլեջում տեղի ունեցող գործընթացները, ներկայիս մարտահրավերները, նոր ՌԾ-ի շրջանակում կառավարում և վարչարարություն ռազմավարական ուղղությամբ սահմանված նպատակադրումների իրականացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի համալրելու և հաստակեցնելու կառավարման գործիքակազմը, որպեսզի հնարավոր լինի իրականացնել նոր ՌԾ-ով սահմանված կառավարման համակարգի բարելավումը:

Թեև քոլեջը կարևորում է առաջիկա 5 տարվա համար կառավարման ոլորտում սահմանված հավակնությունների և ակնկալվող արդյունքների իրագործումը, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի սահմանած ակնկալվող արդյունքները վերաձևակերպման

[2] ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԵԼ Է ՔՈԼԵՋԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

անհրաժեշտություն ունեն՝ գործողություններից ու մոտեցումներից փոխակերպելով հստակ ձևակերպված արդյունքների։ Նշյալի պարագայում կներդրվի արդյունքահենք կառավարման համակարգ։

Չնայած որ քոլեջը պետական ֆինանսավորման և ուսանողների վարձավճարների հաշվին կարողանում է ապահովել ինքնածախսածածկում, ուր խոշոր ծախսային հոդվածը՝ 82%-ի չափով կազմում է աշխատավարձի ֆոնդը, այդուհանդերձ քոլեջի առջև ծառացած ռեսուրսային բազայի բարելավման մարտահրավերը զգալի ֆինանսավորում է պահանջում, որը քոլեջն իր ընթացիկ ծախսը ֆինանսավորելուց հետո 18% կազմող ազատված դրամական միջոցներով չի կարող իրականացնել։ Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ անցած ռազմավարական շրջափուլի ընթացքում քոլեջին չի հաջողվել մշակել եկամուտների ավելացման այլընտրանքային մեխանիզմներ, ներգրավել ներդրողների և որոշակի մարտավարություն մշակել ռեսուրսների բարելավման գործում։ ՈՒստի ֆինանսավորման նոր բանաձևերի կիրառումը արդիական և հրատապ խնդիր է քոլեջի հետագա գործունեության կազմակերպման համար։

Մտահոգիչ է, որ դասախոսներն ու ուսանողները, որպես անմիջական շահառուներ, նախաձեռնող մասնակցություն չունեն իրենց առնչվող որոշումների կայացմանը և ԿԽ-ում քննարկված հարցերը հիմնականում բարձրացնում է քոլեջի տնօրենը, ինչի պարագայում խոչընդոտվում է ներքին շահակիցների մասնակցային կառավարումը քոլեջի գործունեությանը։

Դրական է, որ ՌԾ-ի կատարման հիմքում դրված են քոլեջի գործողությունների համալիր տարեկան պլանները, սակայն փորձագիտական խումբը բացասական է գնահատում, որ գործողությունների տարեկան պլաններն ու ՌԾ-ն համահունչ չեն, գործողությունների պլաններում ներառված գործընթացների շղթան ՌԾ-ով սահմանված առաջնահերթությունների տրամաբանական հաջորդականության մեջ չեն, բացի այդ էլ՝ նախանշված են մեծ թվով գործողություններ, որոնց կատարման վերաբերյալ ամփոփ տվյալները բացակայում են և հնարավոր չէ գնահատել՝ որքանո՞վ են այդ գործողություններն արդյունավետ իրականացվել։ Ի հավելումն նշյալի, փորձագիտական խումբը նշում է, որ ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները ևս պլանավորում-իրականացում կապի մեջ համադրելի չեն, շեշտադրված չեն վերհանված հիմնավոր խնդիրների ամփոփման և առաջիկա պլաններում ներառման գործիքները, մշակված չեն երկարաժամկետ և կաճաժամկետ պլանների գանահատման մեխանիզմները, ուստի վտանգված է կառավարման համակարգի արդյունավետությունը։

Դրական է, որ քոլեջն իրականցրել է ռեսուրսային բազայի ներքին գնահատում, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող համապարփակ ներքին գնահատում իրականացնելու պարագայում ճանաչելի կդառնան քոլեջի և՛ կրթական, և՛ տնտեսական խնդիրները, կկանխորոշվեն քոլեջի գործունեության ներքին և արտաքին ռիսկերը։

Թեև քոլեջն արդեն-իսկ ներդրել է շրջանավարտների և գործատուների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, որոնց արդյունքում ընդգծվել են ՄԿԾ-ների բարելավման կարևոր խնդիրներ, այնուամենայնիվ այդ խնդիրների լուծումները դեռևս տեսանելի չեն և հնարավոր չէ հստակ գնահատում տալ դրանց արդյունավետության վերաբերյալ, ու քանի որ կառավարման ՊԻԳԲ-ն պլանավորում-իրականացում շղթայի մեջ է, հապաղում են գնահատումների հիմքով բարելավումները։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ում առկա են ռազմավարական կառավարման խնդիրներ՝ քոլեջի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները համադրելի չեն, մշակված չեն երկարաժամկետ

և կարճաժամկետ պլանների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները, շեշտադրված չեն վերհանված հիմնավոր խնդիրների ամփոփման և առաջիկա պլաններում ներառման գործիքները, ներդրված չէ քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կառավարման համակարգը, անցած ռազմավարական շրջափուլում չեն մշակել եկամուտների ավելացման այլընտրանքային մեխանիզմներ, հստակ մարտավարություն՝ միտված ռեսուրսային բազայի բարելավմանը, կառավարման մակարդակում ՊԻԳԲ-ն դեռևս պլանավորում-իրականացում շրջափուլում է և հապաղում են գնահատումների հիմքով բարելավումները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

ԷՊՔ-ն իրականացնում է 9 միջին մասնագիտական կրթական ծրագիր առկա և հեռակա ձևաչափով՝ «Առևտուր», «Սպասարկման կազմակերպում», «Բանկային գործ», «Գյուղատնտեսագիտություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Ռեժիսուրա», «Նախադպրոցական կրթություն», «Գրադարանային գործ» և «Հաշվապահական հաշվառում»: «Ռեժիսուրա» և «Գյուղատնտեսագիտություն» ՄԿԾ-ները վերաբացվել են համապատասխանաբար 2020-2021 և 2018-2019 ուստարիներին՝ նախկինում եղած լիցենզիաների հիման վրա: «Ռեժիսուրա» մասնագիտությամբ շրջանավարտ քոլեջը կունենա 2023-2024 ուստարում: Հեռակա կրթություն իրականացնելու թույլտվություն քոլեջն ունի «Նախադպրոցական կրթություն», «Գրադարանային գործ», «Հաշվապահական հաշվառում», «Առևտուր», «Սպասարկման կազմակերպում» և «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտությունների գծով, սակայն 2022 թ. ընդունելություն են իրականացրել միայն «Նախադպրոցական կրթություն», «Գրադարանային գործ», «Հաշվապահական հաշվառում» մասնագիտություններով: 2022-2023 ուստարում (2023 թ. մայիսի 18-ի դրությամբ) 9 կրթական ծրագրով քոլեջում ուսումնառում է առկա բաժնում 530, իսկ հեռակա բաժնում՝ 35 ուսանող: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա մասնագիտությունները համահունչ են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կարիքներին: Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումից պարզվեց, որ տարածաշրջանն ունի այլ մասնագետների պահանջ, մասնավորապես՝ գիդերի, գյուղատնտեսության ոլորտի մասնագետների, խաղողագործների, գինեգործության մասնագետների, տարբեր ուղղվածության տեխնոլոգների: Նաև պարզվեց, որ քոլեջը նպատակ է ունեցել ներդնել նոր մասնագիտություն՝ «Համակարգչային գեղարվեստական նախագծում», սակայն ԿԳՄՄ նախարարությունը չի

տրամադրել մասնագիտությունն իրականացնելու լիցենզիա՝ հաշվի առնելով քոլեջի նյութատեխնիկական բազան և շենքային պայմանները:

Քոլեջն ունի 2 ամբիոն՝ Տնտեսագիտության ու Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման, 3 ցիկլային հանձնախումբ՝ Հասարակագիտական և հումանիտար առարկաների, Բնագիտական առարկաների, Հայոց և օտար լեզուների: Ընդ որում, ամբիոնների ու ցիկլային հանձնախմբերի աշխատանքը բալանսավորված չէ, մեկ ամբիոնում՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ընդհամենը մեկ ՄԿԾ է, իսկ մյուսում՝ Տնտեսագիտության ամբիոնում ընդգրկված են՝ «Բանկային գործ», «Սպասարկման կազմակերպում», «Գյուղատնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում», «Առևտուր» ՄԿԾ-ները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Սպասարկման կազմակերպում» ՄԿԾ-ի շրջանավարտը Տնտեսագիտության ամբիոնի կողմից լայն շրջանակով է ընկալվում, ինչպես օրինակ՝ բանկային ոլորտի, բժշկության ոլորտի, կապի, առևտրի ոլորտի սպասարկման ծառայությունների մասնագետ, այնինչ մասնագիտության ՊԿՉ-ի զբաղմունքի նկարագրում մատնանշված են այլ ոլորտներ: Մեկ ամբիոնում մի քանի ՄԿԾ-ների միաժամանակյա կազմակերպումը որոշակի ծանրաբեռնվածություն կարող է առաջացնել և վտանգել ՄԿԾ-ների արդյունավետ կառավարումը: Փորձաքննության արդյունքներով՝ գործող 9-ը մասնագիտություններից վերջին տարում ուսանողների թվաքանակի ավելացում է արձանագրվել ուսումնասիրվող 3 ՄԿԾ-ներում («Սպասարկման կազմակերպում», «Բանկային գործ» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»): Հատկանշական է, որ նոր վերաբացված «Ռեժիսուրա» մասնագիտությունում նույնպես ակնառու է ուսանողների թվաքանակի ավելացումը: Մյուս մասնագիտությունների գծով պահպանվում է ընդունելության կայունությունը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ «Բանկային գործ» ՄԿԾ-ի 2018-2022թթ. տվյալներով 144 շրջանավարտներից 84-ը (շուրջ 60% -ը) կրթությունը շարունակել են բուհերում, «Սպասարկման կազմակերպում»-ում՝ 106-ից 32-ը (շուրջ 30%-ն), իսկ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»-ում պատկերն այլ է՝ 109 շրջանավարտից 15-ն է (շուրջ 14%-ն) է կրթությունը շարունակել բուհում: 2018-2022թթ. շրջանավարտներից, ըստ կարիերայի պատասխանատուի կողմից ԿԳՄՍ նախարարություն ներկայացված տվյալների, «Բանկային գործ» ՄԿԾ-ից շուրջ 6%-ն է աշխատում իր մասնագիտությամբ, «Սպասարկման կազմակերպում»-ում՝ 13%-ը, իսկ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»-ում՝ շուրջ 9%-ը, ընդհանուր շրջանավարտների կտրվածքով իրենց մասնագիտությամբ աշխատողների վերաբերյալ քոլեջը հավաքագրած տվյալներ չունի[3]:

Բացի երկարաժամկետ կրթական ծրագրերից, քոլեջն իրականացրել է երեք լրացուցիչ՝ «Մենեջեր», «Հաշվապահ» և «Համակարգչային օպերատոր» կարճաժամկետ ծրագիր, որոնք հաստատությանը բերել են լրացուցիչ եկամուտ:

Բոլոր կրթական ծրագրերը միջին մասնագիտական են և համապատասխանում են պետական կրթական չափորոշչի պահանջներին: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ներկայացված մոդուլային ծրագրերի վավերացման հետ կապված առկա չէ մեկ ընդհանրական մոտեցում, որոշներում բացակայում են կարևոր ստորաբաժանումների վավերացումները, բացի

[3] ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԵԼ Է ՔՈԼԵՋԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

այդ ծրագրերի մեծ մասում առկա չեն ծրագրային մանրամասները (բացառությամբ «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության մոդուլային ծրագրերի):

Բացի երկարաժամկետ կրթական ծրագրերից, քոլեջն իրականացրել է երեք լրացուցիչ՝ «Մենեջեր», «Հաշվապահ» և «Համակարգչային օպերատոր» կարճաժամկետ ծրագիր, որոնք հաստատությանը բերել են լրացուցիչ եկամուտ:

Դիտարկվող մասնագիտությունների ուսումնական պլաններում առկա են նախասիրական առարկաներ՝ «Գործավարության հիմունքներ», «Ընտանեկան կյանքի նախապատրաստում», «Վարվելակերպը գործարար հարաբերություններում», «2-րդ օտար լեզու», «Գործարար խաղեր», «Բարոյագիտություն», որոնց ներդրումը ամբիոնների իրավասության շրջանակում է, սակայն ընտրության հիմքերում առկա չեն ներքին շահակիցների մասնակցության փաստերը: «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության ուսպլանում ընտրովի առարկաների համար հատկացված է 138 ժամ, իսկ «Բանկային գործ» մասնագիտության ընտրովի ժամերը 30-ն են, սակայն առարկաների անվանումները նշված չեն: Միայն «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսպլանում առկա է 36 ժամանոց (այլ ուսպլանով՝ նաև 90 ժամանոց) «Մասնագիտական օտար լեզու» ընտրովի առարկան, որի ներդրման համար հիմք են հանդիսացել ամբիոնի կողմից իրականացված դասալսումների արդյունքները:

Դիտարկվող 3 ՄԿԾ-ների ուսպլաններում ներկայացված են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, մասնագիտական և նախաավարտական պրակտիկաներ: Ըստ պրակտիկայի ծրագրի՝ ուսումնական պրակտիկայի նպատակն է ամրապնդել տեսական գիտելիքները, կատարելագործել դասերի ժամանակ ձեռք բերած մասնագիտական հմտություններն ու փորձը: Մասնագիտական պրակտիկան նպատակ ունի ապահովել սովորողների մասնագիտական որակների բարձրացումը, իսկ նախաավարտական պրակտիկան՝ կատարելագործել մասնագիտական հմտություններն ու գիտելիքները: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անհրաժեշտությունից ելնելով, օրինակ՝ «Գյուղատնտեսագիտություն» ՄԿԾ-ում գյուղատնտեսական աշխատանքների հետ կապված, տեսական և գործնական գիտելիքները ստանալու համար կատարվել են պրակտիկաների տեղաշարժեր, որոնք արձանագրվել են ամբիոնների նիստերում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Սպասարկման կազմակերպում» ՄԿԾ-ի մասնագիտական և նախաավարտական պրակտիկաները իրականացվում են ինչպես սպասարկման ոլորտի կազմակերպություններում՝ հյուրանոց, ռեստորան և այլն, այնպես էլ բանկերում, կապի սպասարկման կազմակերպություններում, շինանյութի խանութում, գրախանութում, հաշվապահական գրասենյակում: «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության պրակտիկայի ծրագրերը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ նախաավարտական պրակտիկայի ծրագիրը նախատեսված է բանկում անցկացնելու համար, հարկ է նշել, որ տվյալ մասնագիտությունն ավարտած մասնագետի զբաղմունքի նկարագրում առկա չէ բանկային համակարգում մենեջեր աշխատելու փաստը: Բացի այդ, մասնագիտական պրակտիկայի ծրագրում կան այնպիսի թեմաներ, օրինակ՝ վճարվող հարկատեսակները, դրանց հաշվարկման կարգը, վճարման ժամանակացույցը կամ հարկային հնարավոր արտոնություններից օգտվելու դեպքերը, հաշվապահական հաշվառման սկզբունքները, գրանցումների կարգը, հաշվապահական հաշվառման կանոններն ու կարգը, օրենսդրական պահանջները և այլն, որոնց վերաբերյալ ոչ խորը տեսական գիտելիքներ

ուսանողները ստանում են «Կիրառական տնտեսագիտություն և գործարար հմտություններ» ոչ մասնագիտական մոդուլի շրջանակում (արդյունք 6): Նախաավարտական պրակտիկայի թեմաների ցանկում կան այնպիսի թեմաներ, օրինակ՝ նոր ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալը և դրանցից ակնկալվող լրացուցիչ եկամուտների պլանային հաշվարկը կամ ներդրումների անհրաժեշտության հիմնավորումը և արդյունքների կանխատեսումը, որոնք պահանջում են գիտելիքներ և վերլուծական հմտություններ այլ մասնագիտական մոդուլներից: Հավելելով՝ «Սպասարկման կազմակերպման» ՊԿՉ-ում ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներում առկա չեն նման վերջնարդյունքներ:

«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում գործնականում մեկ պրակտիկայի վայր է՝ «Արփինետ» ՍՊԸ-ն, սակայն կան կնքված համագործակցության հուշագրեր այլ կազմակերպությունների հետ: «Բանկային գործ» ՄԿԾ-ում պրակտիկայի վայրերը տարբերակված են և ներառում են Էջմիածին քաղաքի տարբեր բանկերի մասնաճյուղեր, վարկային կազմակերպություններ, հաշվապահական հաշվառման գրասենյակ: Հարկ է նշել, որ այս 3 մասնագիտությունների գծով փորձեր են կատարվում պրակտիկաների անցկացման վայրերի ցանկում ընդգրկել նաև Երևանյան կազմակերպություններին:

Փորձագիտական ուսումնասիրությունների և վերոշարադրյալի արդյունքում պարզ դարձավ, որ «Սպասարկան կազմակերպում» և «Բանկային գործ» մասնագիտությունների պրակտիկայի թեմաներն այնպես են ընտրված, որ պրակտիկ հմտությունների վերջնարդյունքների մասով համընկնում են, ընդհանուր են պրակտիկայի վայրերը և ծրագրերը: Պրակտիկաների օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշներում առկա են գործնական հմտությունները փաստող գործողությունների նկարագրեր, օրինակ՝ «Սպասարկան կազմակերպում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ների պրակտիկայի որոշ օրագրերում, իսկ «Բանկային գործ» մասնագիտության նույն կազմակերպություններում անցկացված պրակտիկայի օրագրերը բառացի նույնական են, իսկ հաշվետվությունները՝ ռեֆերատի տրամաբանությամբ:

Քոլեջի կողմից ներկայացված տվյալներով ուսումնառության արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների մեծ մասն ինտերակտիվ են: Փորձագիտական այցից և իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսները դասի ընթացքում կիրառում են մինչև 5 մեթոդ, որոնք հիմնականում ապահովում են դասի նպատակը և նպաստում են ուսանողակենտրոն դասի անցկացմանը: Ուսումնառության նյութեր առկա են «Բանկային գործ» ՄԿԾ-ի ոչ բոլոր մոդուլներում, առկա գրականությունը բավականին հին է, մասնավորապես՝ **«**Բանկային մարքեթինգ**»** մոդուլի համար հիմք են Ֆինանսաբանկային քոլեջի **«**Բանկային մարքեթինգ**»** 2003թ.նյութերը, ուսանողներին տրամադրվում են թարմացված տեղեկատվություն՝ դասախոսության տեսքով: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում օգտագործում են ՀԱՊՀ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, ԿԱ ուսումնական ձեռնարկները ու խնդրագրքերը, «Սպասարկան կազմակերպում» ՄԿԾ-ի բոլոր մոդուլներում առկա են ուսումնառության նյութեր, դասախոսների նախաձեռնությամբ, քոլեջի և ուսանողների օժանդակությամբ բազմացվել են «Pre-intermediate Student'sBook» մասնագիտական անգլերենի գիրք- տետրերը, նմանատիպ ուսումնաօժանդակ նյութ առկա է նաև մասնագիտական ռուսերենից:

«Անձնական խնամքի, հիգիենայի և բուժական ծառայությունների սպասարկման կազմակերպում» մոդուլից ուսանողներին հանձնարարված առաջադրանքները վերաբերում են «Ալֆա Ֆարմ» դեղատնային ցանցին, «Նաիրի», «Մեդլայն», «Սլավմեդ», «Աստղիկ», «Ավանտա» և այլ բժշկական կենտրոններին, որոնք մատուցում են մասնագիտացված և բազմապրոֆիլ բժշկական ծառայություններ, այնինչ՝ խնամքի, հիգիենայի և բուժական ծառայությունները, ինչպես նշված է մոդուլի կատարման չափանիշներում, վերաբերում են վարսահարդարման, անձնական խնամքի, մատնահարդարման, մերսման ծառայություններին:

«Սոցիալ-կենցաղային ծառայությունների սպասարկման կազմակերպում» մոդուլի հանձնարարականները վերաբերում են Վիվա-ՄՏՍ, Յուքոմ, Օրանժ կապի ծառայությունների և Bookinist գրախանութների ցանցի ուսումնասիրություններին, ուսանողները վերոնշյալ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն են ներկայացնում և ստեղծում դրանց ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ հարցաթերթիկներ: Առաջադրանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որպես սոցիալ- կենցաղային սպասարկման ծառայություններ ասելով նկատի ունեն՝ այս դեպքում գրքերի վաճառքի և կապի ծառայությունները, այնինչ՝ սոցիալ-կենցաղային ծառայություններ են լվացքատան և քիմմաքրման ծառայությունները, վերանորոգման, տարածքների մաքրման ծառայությունները և այլն:

«Սպասարկման կազմակերպում» ՄԿԾ-ի վերոնշյալ առաջադրանքներից տարբերվում է «Մարքեթինգային հմտություններ սպասարկման ոլորտում» ընդհանուր մասնագիտական մոդուլից ուսանողներին տրամադրվող առաջադրանքները՝ հանձնարարվել է ստեղծել բուկլետներ, թռուցիկներ, գովազդային հոլովակներ, որոնք ոչ միայն ապահովում են մոդուլով սահմանված նաև զարգացնում են ուսանողների ստեղծագործական միտքը:

Ինչ վերաբերում է «Բանկային գործ» մասնագիտության առաջադրանքներին, ապա «Հաշվապահական հաշվառումը բանկերում» մոդուլի համար տրամադրված առաջադրանքները միայն կարող են տեսական գիտելիք ստուգել, «ՀՀ հարկային օրենսդրություն» մոդուլի առաջադրանքները ընկալելի են ձևակերպված, սակայն մասնագիտական համատեքստը ամբողջական չէ: Դրան զուգահեռ՝ «Գործառնություններ արժեթղթերով» մոդուլի գործնական առաջադրանքները խնդրի տեսքով են, գործնական կարողություններ ստուգող: «Բանկային մարքեթինգ» մոդուլի շրջանակում ուսանողներին տրամադրվող առաջադրանքները ներառում են առաձին բանկային պրոդուկտների ուսումնասիրություններ, թեստեր:

Ընդհանուր առմամբ, դիտարկվող 3 մասնագիտություններում տրամադրված առաջադրանքները, հանձնարարականները գիտելիք և գործնական կարողություններ ձևավորող են:

Ներկայումս ԷՊՔ-ում կուրսային աշխատանքներ գրում են միայն «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանողները, ընդհանրության մեջ այդ աշխատանքները առաջադրված խնդիրների լուծումներ և դրանց համահունչ եզրահանգումներ չեն պարունակում: «Բանկային գործ» ՄԿԾ-ում կուրսային աշխատանք կատարվել է ընդամենը մեկ կիսամյակի կտրվածքով՝ «Հաշվապահական հաշվառումը բանկերում» մոդուլից, սակայն դասախոսների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ կուրսային աշխատանքը հանվել է ուսպլանից: Նախագծային աշխատանքներ են իրականացվում «Բանկային գործ» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ներում, որոնք իրենց բովանդակությամբ և կառուցվածքում ավելի շատ ռեֆերատներ են և վերջնական ձևավորված նախագծի տեսքով չեն:

Քոլեջում ներդրվել են նախագծային աշխատանքներ «Բանկային գործ» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ներում, առկա է նախագծային աշխատանքների պատրաստման և ներկայացման կանոնակարգ, որը հաստատված է տնտեսագիտության ամբիոնի կողմից և վերաբերում է ոչ թե նախագծային աշխատանքների կատարմանը, այլ ռեֆերատների կատարման ընթացքին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում հստակ չեն տարանջատվում ռեֆերատների, գործնական, կուրսային և նախագծային աշխատանքների կատարման չափանիշները, կառուցվածքային տարբերությունները, գնահատման մեխանիզմները:

Ուսումնասիրվող 3 ՄԿԾ-ների շրջանակներում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունների դիտարկվող հարցաշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում պարունակում են տեսական գիտելիքները ստուգող հարցեր:

Քոլեջում ուսանողների գնահատման համար մշակվել է «Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի կանոնակարգ», որով համակարգվում է ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատումը, պետական ամփոփիչ ստուգման կազմակերպումն ու անցկացումը և բողոքարկման գործընթացը: ԷՊՔ-ում պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է մասնագիտական մոդուլներից բանավոր քննության ձևով: Քոլեջում գործող ՄԿԾ-ների շրջանակներում դեռևս դիպլոմային աշխատանք չի իրականացվում, նախատեսվում է 2024-2025 ուստարվանից «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորումը իրականացնել դիպլոմային աշխատանքով: Յուրաքանչյուր մոդուլի ուսումնառության արդյունք ավարտվում է արդյունքի ամփոփմամբ, կան մոդուլներ, որոնք ամփոփվում են քննությամբ, ուսանողներին տրվում են գնահատման թերթիկներ, որոնցում առկա են արդյունքի վերաբերյալ հանձնարարություններ, հարցեր: «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության «Կառավարման հիմունքներ» մոդուլի 6-րդ ուսումնառության արդյունքի՝ «Ընդունել ռացիոնալ կառավարչական որոշումներ», ստուգման համար ուսանողին հանձնարարվում է իրավիճակային խաղ, որը վերաբերում է կադրերի ընտրությանը: Իրավիճակային խաղը բաղկացած է երեք առաջադրանքից, որոք պահանջում են ուսանողների անհատական մոտեցումները և ապահովում են ակադեմիական ազնվությունը: «Բանկային գործ» մասնագիտության «Հարկային օրանսդրություն», «Բանկային գործի հիմունքներ» մոդուլների գնահատման թերթիկներում առկա են գործնական գիտելիքներ ստուգող խնդիրներ և թեստային առաջադրանքներ: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի գնահատման թերթիկներով հիմնականում գործնական հմտություններ են ստուգվում, սակայն կան նաև այնպիսիք, որոնք զուտ տեխնիկական աշխատանք են իրենցից ներկայացնում, օրինակ՝ «Տեքստային և գործարար փաստաթղթերի մշակման և ներկայացման տեխնոլոգիա» մոդուլի գնահատման թերթիկները: Փորձաքննության ընթացքում փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նման առաջադրանքները եզակի են, ուսումնասիրված գնահատման թերթիկները հիմնականում տեսական գիտելիք են ստուգում, երբեմն՝ հանձնարարված է տեսական նյութի պարզ վերաշարադրանք:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում քայլեր են կատարվում գնահատման գործընթացի բարելավման ուղղությամբ, մասնավորապես, առավել փորձառու դասախոսները զեկույցներ են կարդացել ձևավորող գնահատման մեթոդների և մեխանիզմների ներդրման

վերաբերյալ: Նաև պարզ դարձավ, որ փորձեր են արվում գնահատման ժամանակ գնահատականի հստակ չափանիշները ուսանողներին ներկայացնելու ուղղությամբ:

ԷՊՔ-ի ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են ՀՀ-ի քոլեջների նմանատիպ կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ներքին շարժունությանը: Քոլեջը չի իրականացրել ՄԿԾ-ների բենչմարքինգ, սակայն ունի համագործակցություն Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի հետ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության շրջանակներում և համադրվել են կրթական ծրագրերը՝ ուսպլանում կատարել է փոփոխություն, մասնավորապես մոդուլների հերթականության, պրակտիկայի կազմակերպման, հետազոտական աշխատանքների իրականացման հետ կապված: Միջազգային փոխանակման ծրագրեր առկա չեն քոլեջում ոչ ուսանողների, ոչ դասախոսների շրջանում:

ԷՊՔ-ի կրթական ծրագրերի մշտադիտարկում իրականացվում է ամբիոնների որոշումներով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ մշտադիտարկման արդյունքներով ուսպլաններում իրականացվող փոփոխությունների մասով ակտիվ է Տնտեսագիտության ամբիոնը, մասնավորապես՝ անհրաժեշտությունից ելնելով տեղաշարժել են մասնագիտական մոդուլները, պրակտիկաները, պահուստային ժամերից հատկացրել են այն մոդուլներին, որոնց ժամաքանակը ՊԿՉ-երի վերանայման արդյունքում պակասել է և այլն: Դասալսումների արդյունքում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ամբիոնը համանուն մասնագիտության ուսանողների շրջանում մասնագիտական օտար լեզվի մակարդակը բարձրացնելու համար ներդրել է 36 ժամանոց «Մասնագիտական օտար լեզու» ընտրովի առարկան: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԿԾ-ների մշտադիտարկումներով հիմնականում վեր են հանվել ներքին շահակիցների կարիքները, արտաքին շահակիցների, մասնավորապես, գործատուների առաջարկները քիչ տեղ ունեն մշտադիտարկված ՄԿԾ-ների բարելավումներում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԷՊՔ-ում իրականացվող 9 կրթական ծրագրերը համահունչ են ՈԱՇ-ին, քոլեջի առաքելությանը և միտված են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքները բավարարելուն: Դրական արձանագրում է, որ վերջին տարիներին ավելացել է ուսանողների թվաքանակը թե՛ ուսումնասիրվող ՄԿԾ-ների և թե՛ վերաբացված «Ռեժիսուրա» մասնագիտությամբ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ տարածաշրջանում նոր մասնագիտական ուղղվածությունների առկա պահանջի բավարարման համար քոլեջը չունի հնարավորություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նյութատեխնիկական բազայի ոչ բավարար լինելը հնարավորություն չի տալիս լիցենզիա ստանալու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ առանց ռեսուրսային բազայի բարելավման և համալրման հնարավոր չէ ԷՊՔ-ում նոր կրթական ծրագրերի ներդրումը:

Քանի որ Տնտեսագիտության ամբիոնում ընդգրկված են թվով 5 ՄԿԾ-ներ, որոնց կառավարման գործընթացներն ըստ մասնագիտական ուղղությունների բազմաբովանդակ են, ուստի մեկ ամբիոնում մի քանի ՄԿԾ-ների միաժամանակյա կազմակերպումն ու կառավարումը որոշակի դժվարություններ և ծանրաբեռնվածություն կարող է առաջացնել և վտանգել ՄԿԾ-ների արդյունավետ կառավարումը:

Փորձագիտական խումբը իր անհանգստությունն է ներկայացնում առ այն, որ դիտարկվող մասնագիտություններով շրջանավարտները հիմնականում կրթություն շարունակում են բուհերում, քան իրենց տեղն են զբաղեցնում աշխատաշուկայում:

Գովելի է, որ մասնագիտությունների ուսպլաններում առկա են ուսանողների ընդհանուր զարգացվածությունն ապահովող նախասիրական առարկաներ, հատկացված են դասաժամեր ընտրովի առարկաների համար, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց արդյունավետ ներդրման համար շատ կարևոր է հաշվի առնել ուսանողների և գործատուների կարծիքները՝ դրանք ավելի թիրախային դարձնելու նպատակով:

Դրական է, որ քոլեջի ՄԿԾ-ների պրակտիկաների բազաները բազմազան են, միևնույն ժամանակ փորձագիտական խումբն առանձնացնում է հետևյալ խնդրահարույց կետերը՝ «Սպասարկման կազմակերպում» և «Բանկային գործ» ՄԿԾ-ների պրակտիկայի ծրագրերը, թեմաները և դրանցով ակնկալվող վերջնարդյունքները համընկնում են, բացի դա երկու մասնագիտության համար նախատեսված պրակտիկայի վայրերը նույնպես կրկնվում են, և հաշվի առնելով՝ առնվազն «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության տեսական գիտելիքները հնարավոր չէ պրակտիկայի վայրում՝ բանկում, վարկային կազմակերպությունում, հաշվապահական հաշվառման գրասենյակում, կապի կազմակերպությունում կիրառել և դրանք ամրապնդել գործնական հմտություններով, ուստի գործնական հմտություններ ձեռք բերելու մասով խախտվում է «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության ՊԿՉ-ի զբաղմունքի նկարագրի պահանջը: Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ քոլեջը պրակտիկաների արդյունավետության բարձրացման համար արագ արձագանքում է և ուսպլանում կատարում համապատասխան տեղաշարժեր: Գովելի է, որ «Սպասարկման կազմակերպում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների պրակտիկայի որոշ օրագրեր բացահայտում են ուսանողների պրակտիկ հմտությունները, սակայն նույնը հնարավոր չէ փաստել «Բանկային գործ» մասնագիտության պրակտիկայի օրագրերի վերաբերյալ՝ վտանգելով տվյալ մասնագիտության պրակտիկայի արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը նշում է, որ դասապրոցեսի ընթացքում դասախոսի կողմից կիրառվող մեթոդների մեծ մասը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, որի արդյունքում հնարավոր է դառնում հասնել ուսումնառության պլանով նախատեսված նպատակադրումներին:

Փորձագիտական խմբին մտահոգում է այն փաստը, որ «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության հատուկ մասնագիտական մոդուլներից տրված հանձնարարականները ուսանողի մոտ կարող են չձևավորել մասնագիտության զբաղմունքի նկարագրով սահմանված կարողություններն ու հմտությունները, քանի որ վերջիններիս թեմաները հիմնականում չեն համապատասխանում մոդուլի նպատակին: Փորձագիտական խումբը այս առիթով կարևորում է գործնական կարողությունների զարգացման գործում ինքնուրույն և ըստ թեմայի տրվող հանձնարարականների առկայությունը, որի արդյունքում զգալիորեն կբարելավվեն ուսանողների գործնական կարողությունները:

Փորձաքննության արդյունքներով ակնառու է, որ «Բանկային գործ» մասնագիտության առաջադրանքներում թեև գերակշռում են գիտելիք ստուգող առաջադրանքները, սակայն որոշներում կան նաև խնդիրներ, բանկային պրոդուկտների ուսումնասիրություններ և թեստեր: Փորձագիտական խումբը գտնում է, որ ըստ առանձին մոդուլների գործնական հմտություններ և կարողություններ ձևավորող առաջադրանքների փաթեթների առկայությունը կնպաստի կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Դրական է, որ քոլեջը 2 ՄԿԾ-ներում ներդրել է կուրսային, նախագծային աշխատանքներ, սակայն միևնույն ժամանակ հաշվի չի առել կուրսային և նախագծային աշխատանքերի իրականացման

ռիսկերը և դրանց բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկությունները: Արդյունքում 2 ՄԿԾ-ից միայն մեկում է կուրսային աշխատանք իրականացվում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողների գնահատման համար առկա է կանոնակարգ, որով համակարգվում է թե՛ ընթացիկ, թե՛ ավարտական գնահատումը: Կարևորվում է, որ բացի ընթացիկ՝ ըստ արդյունքների գնահատումից, որոշ մոդուլներն ամփոփվում են քննությամբ, ինչը հնարավորություն է տալիս ստուգել ոչ միայն տեսական գիտելիքները, այլև գործնական կարողությունները:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ ԷՊՔ-ն գործուն քայլեր է իրականացնում գնահատման գործընթացը բարելավելու ուղղությամբ՝ փորձառու դասախոսների կողմից գնահատման արդյունավետ մեթոդների վերաբերյալ զեկույցների ներկայացմամբ, որը, որպես հաջողված փորձ, արդեն կիրառվում է որոշ դասախոսների կողմից:

Չնայած այն հանգամանքին, որ քոլեջը միջազգային հաստատությունների հետ ծրագրային բենչմարքինգի փորձեր չի արել, սակայն փորձագիտական խումբը դրական է համարում, որ մեկ կրթական ծրագրի մասով համագործակցել է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի հետ, արդյունքում քոլեջը «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության շրջանակներում ուսպլանում կատարել է փոփոխություն՝ նպաստելով այդ կրթական ծրագրի լավարկմանը ։

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջում ՄԿԾ-ների հետ կապված իրականացվել են որոշ բարելավումներ, սակայն իրականացված փոփոխությունների հիմքում արտաքին շահակիցների կարիքը ներառված չէ: Դրական է, որ բարելավման գործընթացների հիմքում դրվել է դասալսումների նոր մեխանիզմ, որը բոլոր ամբիոններում և ցիկլային հանձնախմբերում տարածելի դարձնելու դեպքում կնպաստի ՄԿԾ-ների արդյունավետության բարձրացմանը: Գովելի է, որ ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել ներքին շահակիցների կարիքները, սակայն գործատուների՝ որպես աշխատաշուկայի հիմնական շահառուների կարիքները տեղ չեն գտել ՄԿԾ-ների բարելավումներում: Փորձագիտական խումբը գտնում է, որ մասնավոր հատվածի հետ հաղորդակցումը կնպաստի ԱՀՈՒ գործընթացների ներդրմանը և մրցունակ կադրերի պատրաստմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ն ունի տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին համարժեք ՄԿԾ-ներ, վերջին տարիներին գործող ՄԿԾ-ներով ավելացել է ուսանողների թվաքանակը, պրակտիկաների բազաները ըստ մասնագիտությունների բազմազանեցված են, իրականացվել են ՄԿԾ-ների մշտադիտարկումներ և բարելավումներ, վեր են հանվել ներքին շահակիցների կարիքները, առկա է կրթական ծրագրերի համադրության հաջողված փորձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԷՊՔ-ում առկա է ուսանողների հավաքագրման և ընդունելության կազմակերպման համակարգված գործընթաց: Ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցմամբ՝ անվճար և վճարովի տեղերին համապատասխան, իսկ հեռակա ուսուցմամբ՝ վճարովի տեղերին համապատասխան: Հաստատությունում առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող, իսկ հեռակա ուսուցմամբ՝ առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով: Ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքներով, բացառությամբ «Ռեժիսուրա» մասնագիտության: Այս մասնագիտության դիմորդները հանձնում են քննություն: ԷՊՔ-ն մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելում է տարածաշրջանի դպրոցներ՝ ներկայացնելով քոլեջում գործող մասնագիտությունները, մասնագիտական հեռանկարները: Պարբերաբար կազմակերպվում են բաց դռների օրեր, ծնողների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում ևս ներկայացվում են քոլեջում գործող մասնագիտությունները: Բացի այդ ընդունելության, քոլեջում առկա մասնագիտությունների, ընդունելության տեղերի վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվում քոլեջի ֆեյսբուքյան էջի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների թիվը վերջին տարիներին ավելացել է՝ հասնելով 565-ի:

2020թ-ից ընդունելությունն իրականացվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ լինում են դեպքեր, երբ քոլեջի ուսանողներն իրենք են ներկայացնում իրենց մասնագիտության նկարագիրը ցանկացած պահին քոլեջ հաճախող դիմորդներին:

ԷՊՔ-ում առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ: Դրանք են՝ ՈՆԱ կառույցի կողմից իրականացվող հարցումները և ֆոկուս-խմբային հանդիպումները: Քոլեջում առկա է առաջարկների և բողոքների արկղ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց առաջարկները և դժգոհությունները մատուցվող ծառայության և կրթական միջավայրի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը խմելու ջրի հետ կապված խնդիր ունի և դա անհանգստացնում է թե՛ ուսանողներին, թե՛ աշխատակիցներին: Այս ուղղությամբ ԷՊՔ-ն դիմել է համայնքապետարան և Վաղարշապատը սպասարկող «Վեոլիա Ջուր» ընկերությանը խնդրին շուտափույթ լուծում տալու համար: ԷՊՔ-ն ուսանողների կրթական կարիքների վերհանման համար ունի նաև ՈՒԽ, այդպիսի օղակ են հանդիսանում նաև կուրսղեկները: Արձագանքելով ուսանողների պահանջներին և իրականացնելով դասալսումներ՝ փոփոխություններ են կատարվել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսպլանում՝ ներդնելով «Մասնագիտական անգլերեն» ընտրովի առարկան:

Քոլեջում խորհրդատվություն ստանալու համար ուսանողը ազատ է ցանկացած պահին դիմելու իր կուրսղեկին, վարչական անձնակազմին, ամբիոնների վարիչներին, ցիկլային հանձնախմբերի ղեկավարներին, դասախոսներին և ՈՒԽ-ին: ԷՊՔ-ն՝ արձագանքելով ուսանողների կրթական

կարիքներին և պահանջներին, լրացուցիչ կազմակերպել և անցկացրել է դասընթացներ «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկայից, «Ալգորիթմների տարրերի կիրառումը» մոդուլից, «Ծրագրավորման հիմունքներ» մոդուլից: Բացի այդ, յուրաքանչյուր քննաշրջանից առաջ, բոլոր ՄԿԾ-ների ուսպլաններում նախատեսված են խորհրդատվական ժամեր՝ միջանկյալ քննություններին, պետական ամփոփիչ ատեստավորմանը պատրաստվելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԷՊՔ-ն ուսանողների համար չի սահմանել վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց. նրանք ազատ են իրենց հուզող հարցերով դիմելու ցանկացած ստորաբաժանման աշխատակցի՝ չսահմանափակվելով ժամկետներով և/կամ պաշտոնական ընթացակարգերով, օրինակ՝ «Ռեժիսուրա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները դիմել են տնօրենությանը պրակտիկայի վայրերի բազմազանեցման համար:

ԷՊՔ-ն ունի կարիերայի կենտրոն և կարիերայի պատասխանատու: Վերջինս ուսանողներին տրամադրում է տեղեկատվություն հաստատությունում ուսումնառության գործընթացի առանձնահատկությունների, լրացուցիչ և շարունակական կրթության վերաբերյալ, կազմակերպում է մասնագիտական ճանաչողական բնույթ կրող շրջայցեր ՀՀ տարբեր բուհեր, կազմակերպություններ, իրականացնում է ոչ ֆորմալ դասընթացներ: Կարիերայի պատասխանատուն իրականացնում է նաև հանդիպումներ գործատուների և քոլեջի գործընկեր կազմակերպությունների հետ, ստեղծում գործատուների տվյալների բազա՝ համագործակցելով հիմնականում Վաղարշապատ քաղաքում գործող կազմակերպությունների ու հաստատությունների հետ: Ըստ տարիների ստեղծում է նաև շրջանավարտների բազա՝ հետևելով վերջիններիս զբաղվածությանը: Կարիերայի պատասխանատուի կողմից ուսանողներին տրվում են առաջարկությունների թերթիկներ, որտեղ ուսանողները հանդես են գալիս իրենց առաջարկություններով, օրինակ՝ կազմակերպել միջքոլեջային մրցույթներ, փորձի փոխանակման համար կազմակերպել հանդիպումներ և սեմինարներ ոլորտային մասնագետների հետ, մասնագիտական էքսկուրսիաներ և վարպետաց դասեր:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջում ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում հիմնականում իրականացվում է կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ինչպես նաև նախագծային/հետազոտական աշխատանքների միջոցով: Սակայն հետազոտական համարվող կուրսային աշխատանքների, ռեֆերատների և նախագծային աշխատանքների մեջ հետազոտական և վերլուծական բաղադրիչները սակավ են: Բացի այդ կուրսային և նախագծային աշխատանքները ոչ բոլոր մասնագիտություններում են առկա:

Քոլեջում ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են կանոնադրությամբ, քոլեջի և ուսանողի միջև կնքվող պայմանագրով, Դասախոսների և ուսանողների իրավունքների ու պարտականությունները կանոնկարգով: Ուսանողների իրավունքների պաշտպանության գործում կարևոր է ՈՒԽ-ի դերը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ի գործունեությունը ըստ իր աշխատանքային պլանի սահմանափակվում է թեմատիկ տարբեր միջոցառումների կազմակերպմամբ, օրինակ՝ ասմունքի ցերեկույթ, քայլերթ դեպի Հայրենական Մեծ պատերազմի անհայտ զինվորի հուշարձան, Համբարձման տոն և այլն:

Քոլեջում ուսանողները հնարավորություն ունեն գնահատելու իրենց տրամադրվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունները: Դա իրականացվում է որակի ապահովման

հարցումների և ֆոկուս-խմբային հանդիպումների շրջանակներում, որոնք իրականացվում են տարին 2 անգամ: ՈԱ-ի շրջանակներում կատարվող հարցումների ժամանակ ուսանողները գնահատում են դասապրոցեսը, դասախոսին և դասընթացի արդյունավետությունը: ՈԱ-ի կողմից մշակվել է ևս մեկ գործիք, որը ուսանողներին հնարավորություն կտա գնահատել պրակտիկայի գործընթացը, սակայն այն դեռևս չի կիրառվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԷՊՔ-ն ունի դիմորդների հավաքագրման կազմակերպված գործընթաց, որի արդյունքում տարեցտարի ավելացել է ուսանողների թիվը: Գնահատելի է, որ բացի դպրոցներ այցելելուց, քոլեջում կազմակերպվում են բաց դռների օրեր, ֆեյսբուքյան էջով տրվում են հայտարարություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ուսանողների կրթական կարիքների վերհանման, ինչպես նաև կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման համար իրականացնում է ֆոկուս-խմբային հանդիպումներ և հարցումներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ նշյալ մեխանիզմները կունենան մեծ արդյունավետություն, եթե վերհանված խնդիրները ստանան համարժեք լուծումներ՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի հաջորդականությունը:

Չնայած այն փաստին, որ Քոլեջը լրացուցիչ պարապունքների և խորհրդատվություն տրամադրելու համար չունի հստակ ընթացակարգ, ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով և հնարավորության սահմաններում ստանալ իրենց խնդիրների ուծումը: Դրական է համարվում այն փաստը, որ ուսանողները անկաշկանդ են այդ հարցում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողների կրթական կարիքներից ելնելով, ԷՊՔ-ն տրամադրում է լրացուցիչ պարապմունքներ թե՛ մասնագիտական մոդուլներից, թե՛ առարկաներից՝ արդյունքում բարձրացնելով ուսանողների կրթական մակարդակը: Գնահատելի է, որ քննաշրջաններից առաջ ուսանողներին տրամադրվում է խորհրդատվություն՝ պատրաստելով նրանց քննություններին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ գործընկերային հարաբերությունների ստեղծումը, դասընթացների և մասնագիտական շրջայցերի կազմակերպումը, որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական պատկերացումների զարգացմանը: Բացի այդ հատկանշական է, որ կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող հարցումները ևս ծառայում են որպես ուսանողների կարիքների բացահայտման գործիք՝ արդյունքում լսելի դարձնելով ներքին շահակիցների կարիքները:

Չնայած այն հանգամանքին, որ ուսանողներին հանձնարարվում են ռեֆերատներ, կուրսայիններ, նախագծային աշխատանքներ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ դրանք հետազոտահենք դարձնելը և բոլոր ՄԿԾ-ներում ներդնելը կնպաստի ուսանողների մոտ հետազոտական մտածելակերպի զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է այն փաստը, որ ԷՊՔ-ում ուսանողների շահերի պաշտպանության համար գործում են տարբեր օղակներ, առկա են օրենսդրական կարգավորումներ, սակայն առավել կարևորվում է այդ գործընթացում ՈԻԽ-ի դերի բարձրացումը, ինչի արդյունքում այն կգործի որպես ուսանողների շահերի պաշտպանության կարևոր օղակ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ում առկա են ուսանողների հավաքագրման և ընտրության մեխանիզմներ, ընդունելության կարգ, առկա են կրթական կարիքների վերհանման

գործիքներ, ակնառու է ուսանողների թվի տարեցտարի աճը, ուսանողներն ունեն վարչական անձնակազմին դիմելու ազատություն, առկա են խորհրդատվական, կարիերային նպաստող ծառայություններ, ուսանողների պաշտպանության օղակներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ -ն բավարարում է չափանիշ 4- ի պայմաններին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

ԷՊՔ-ն դասախոսական կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված մրցույթի կազմակերպման և անցկացման կարգով, ըստ որի հաստատությունում դասախոսի թափուր տեղ առաջանալուց հետո տրվում է հայտարարություն (թերթում, հաստատության կայքէջում, ֆեյսբուքյան էջում)՝ նշելով աշխատանքի նկարագրությունը, պահանջվող որակավորումը և այլն: Մրցույթը քոլեջում իրականացվում է բանավոր ձևով, որն իրականացվում է մրցութային հանձնաժողովի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիտարկվող ժամանակահատվածում մրցութային կարգով աշխատանքի է ընդունվել 4 դասախոս: Մրցութային հանձնաժողովի արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ եղել են այնպիսիք, որոնց մասնակցել է 1-ից ավել թեկնածու, առկա են թեկնածուների պատասխանների արձանագրությունները, գնահատումները՝ «պատասխանը թերի է», «պատասխանը լիարժեք է», «պատասխան չկա» տարբերակներով, որոնք փաստում են, որ քոլեջն մրցակցային առավելություն է տալիս թեկնածուների մասնագիտական կարողություններին և հմտություններին: Փորձաքննության արդյունքում պարզվեց, որ թեկնածուներին նախօրոք տրամադրվել են մրցութային հարցաշարերերը, որը պարունակում է թե՛ մասնագիտական, թե՛ մանկավարժական հմտությունները ու գործնական իրավիճակներ քննող հարցեր: Ընդ որում՝ հարցատոմսերը բաղկացած են 5 հարցից՝ 3-ը մասնագիտական առարկայից կամ մոդուլից, 2-ը՝ մանկավարժությունից:

Ուսումնաօժանդակ կազմն աշխատանքի է ընդունվում առանց մրցույթի՝ ըստ առկա պահանջի:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ընդհանրական կարգով ամրագրված են ՊԿՉ-ի 5-րդ գլխում և մրցութային կարգում, հարկ է փաստել, որ ըստ առանձին կրթական ծրագրերի քոլեջը դասախոսների համար հատուկ պահանջներ չի սահմանել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ՝ դասախոսական կազմի համալրման գործընթացում քոլեջը կարևորում է հավակնորդի բարձրագույն կրթությունը, որը պետք է պարտադիր

համապատասխանի դասավանդողի առարկաներին/մոդուլներին: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսական կազմի բազային կրթությունը ամբողջությամբ համապատասխանում է դասավանդվող առարկայի/ մոդուլի պահանջներին: Բացի այդ, տարիֆիկացված դասախոսներից շատերն ունեն մագիստրոսի աստիճան:

Դասախոսական կազմի գնահատման համար քոլեջում ներդրված մեխանիզմներից են դասալսումները, փոխադարձ դասալսումները, որոնք կանոնակարգված չեն՝ կախված դասախոսների ծանրաբեռնվածությունից: Առկա է «Դասալսումների անցկացման կանոնակարգ», որի նպատակն է իրականացնել դիտարկումներ դասընթացների կազմակերպման և անցկացման գործընթացի վերաբերյալ՝ նպաստելով ուսումնառության և դասավանդման որակի բարձրացմանը: Դասալսումներն իրականացնում են ամբիոնները և ցիկլային հանձնաժողովները տարեսկզբին նախապես հաստատված պլանով: Դասալսումներ են իրականացվում նաև հանրակրթական բաժնի վարիչի կողմից հանրակրթական առարկաների մասով: Որակի ապահովման պատասխանատուի կողմից ձևավորվում է աշխատանքային խումբ, որը դասալսման հետ միաժամանակ գնահատում է դասախոսին: Ամբիոնի վարիչները, հանրակրթության բաժինը, փոխադարձ դասալսողները լրացնում են դասալսման թերթիկ, որտեղ նկարագրում են դասի կառուցվածքային մանրամասները, կիրառված մեթոդը, դրական կողմերը, թերությունները, առաջարկությունները կամ դիտողությունները: Դասալսման թերթիկներում դուրս բերված խնդիրներից են՝ մեթոդ չկիրառելը, ուսանողների պասիվությունը, ժամանակակից տեխնիկական միջոցներ չկիրառելը և այլն:

ՈՆԱ կառույցի կողմից ձևավորված հանձնաժողովի աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է դասալսումների անցկացման ձևաչափ, որը պարունակում է նաև 0-3 բալային գնահատում (3- գերազանց, 2- լավ, 1- բավարար, 0-անբավարար): Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ քոլեջը որդեգրել է դասալսումների գործընկերային մոտեցում: Յուրաքանչյուր դասախոսի մոտ տեղի է ունենում 3 դասալսում, որոնց արդյունքում, ըստ նախապես հաստատված 17 չափանիշների, տեղի է ունենում գնահատում: Դասալսումներից հետո հանձնաժողովը դասախոսի հետ քննարկում է դասի դրական և լավարկման անհրաժեշտություն ունեցող կողմերը, տալիս խորհրդատվություն հաջորդ դասալսման համար: Առկա են դասալսումների գնահատման եզրակացություններ, որոնց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նույն դասախոսի մոտ երեք անգամ դասալսում իրականացնելը նպաստել է վերջինիս կողմից դասավանդման արդյունավետ և ժամանակակից մեթոդների կիրառմանը, դասի ճիշտ պլանավորմանը, ուսանողակենտրոն դասավանդմանը և այլն:

Ուսանողները նույնպես իրականացնում են դասընթացի և դասընթացը վարող դասախոսի գնահատում՝ հարցաշարերի միջոցով, որը նույնպես կազմակերպում և իրականացնում է քոլեջի որակի ապահովման պատասխանատուն: Առկա են հարցման արդյունքների վերլուծություններ, սակայն վերլուծությունների արդյունքների հետագիծը չի շարունակվում՝ անավարտ թողնելով ՊԻԳԲ շրջափուլը:

Քոլեջում դասավանդողների կարիքների բացահայտման մեխանիզմները դասալսումներն են և դրանց արդյունքում վերհանված կրթական կարիքները, սակայն դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանավորման հիմքում դրանք չկան: Չնայած այն փաստին, որ քոլեջը կարևորում է դասավանդողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական բարելավումը՝ մասնագիտական վերապատրաստումներ քոլեջում չեն իրականացվել, եզակի են դեպքերը, երբ դասախոսներն իրենք են նախաձեռնել դրանք: Հարկ է

նշել, որ 2021-2022 ուստարում քոլեջի և ՔԱՆ ակադեմիայի համագործակցության արդյունքում դասախոսները մասնակցել են ակադեմիայի կողմից իրականացվող վերապատրաստումներին, որոնք վերաբերում են գնահատման մեթոդներին, որը ևս եզակի դեպք է: Հիմնական մեթոդական վերապատրաստումներն իրականացվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից, որոնք պլանային են:

Անձնակազմի մասնագիտական վերապատրաստումների համար 2022-2023 թվականների նախահաշվով նախատեսված է եղել հատկացնել ֆինանսական ռեսուրսներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նշյալ ժամանակահատվածում վճարովի վերապատրաստումներ չեն իրականացվել:

Քոլեջի դասախոսական կազմը ներկա պահին ապահովում է բոլոր կրթական ծրագրերի իրականացումը, գրեթե բոլոր մասնագիտություններում մասնագիտական մոդուլներ դասավանդողների թիվը սակավ է, որի արդյունքում, օրինակ՝ կան մինչև 12 մասնագիտական մոդուլ դասավանդող դասախոսներ («Բանկային գործ» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտություններում): Հատկանշական է, որ վերջին 5 տարիներին աշխատանքի է ընդունվել 40 նոր դասավանդող, վերջիններիս մեջ մեծ թիվ են կազմում երիտասարդ կադրերը: Ընդհանուր առմամբ, դասավանդողներից 37-ը հիմնական աշխատողներ են, 8-ը՝ համատեղությամբ և 5-ը՝ ժամավճարով: Պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսները սակավ են. ունեն 4 պրակտիկ դասավանդող՝ «Բանկային գործ» մասնագիտությունում՝ 2, «Ռեժիսուրա» մասնագիտությունում՝ 1, «Գյուղատնտեսագիտություն»-ում՝ 1: Քոլեջը վեր է հանել, որ ունի «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության դասախոսի կարիք և քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ:

ԷՊՔ-ն կայունության երաշխիք է համարում տարիներ շարունակ դասախոսների բարձր աշխատավարձը: Հարկ է նշել, որ դասախոսների աշխատավարձերը տարբերակված չեն, բոլորը ստանում են միաչափ աշխատավարձ՝ կախված դասավանդած ժամաքանակից: Հավելավճարներ չեն տրամադրվում, տարվա վերջում ստանում են իրենց դրույքին հավասարաչափ լրավճարներ:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ուղղությամբ 2023-2028 թթ. ՌԾ-ով նախատեսվում է մշակել և կիրառել մարդկային ռեսուրսների առաջընթացի ու խրախուսման քաղաքականություն, իրականացնել աշխատակիցների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Այժմ քոլեջում առկա են շահադրդման մեխանիզմներ պատվոգրերի և շնորհակալագրերի տեսքով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում կան մասնագիտական առաջընթացի օրինակներ՝ «Հաշվողական տեխիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ամբիոնի վարիչը այժմ իրականացնում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պարտականությունները, «Հաղորդակցման հմտություններ» մոդուլ դասավանդող դասախոսը նշանակվել է դաստիրաակչական աշխատանքների գծով փոխտնօրենի պաշտոնում: Բացի այդ՝ հանրակրթության բաժնում դասավանդողները պլանավորել են մասնակցել կամավոր ատեստավորման գործընթացներին, որը հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր աշխատավարձ:

ԷՊՔ-ում 2022-2023 ուստարվա հաստիքացուցակով աշխատում է 28 վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ: Հաստիքների քանակը կախված է ուսանողների ընդհանուր թվից: Փորձագիտական այցից պարզ դաձավ, որ հաստիքացուցակով կան թափուր հաստիքներ, որոնք չեն համալրվել՝ կախված անհրաժեշտությունից (վարորդ, իրավախորհրդատու): Բոլոր վարչական և ուսումնաօժանդակ աշխատողներն ունեն պաշտոնի անձնագրեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԷՊՔ-ն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար առաջնորդվում է նախարարության կողմից հաստատված մրցութային կարգով և մրցույթներին մեկից ավել թեկնածուի մասնակցությունը հնարավորություն է ստեղծել աշխատանքի ընդունել ավելի պատրաստված մասնագետների: Գնահատելի է, որ մրցութային հարցատոմսերում առկա են նաև մանկավարժական հմտությունները ստուգող, գործնական իրավիճակներ քննող հարցեր, որի արդյունքում վերջին տարիներին քոլեջի դասախոսական կազմը համալրվել է երիտասարդ և պատրաստված կադրերով:

Գովելի է, որ բացի մրցութային կարգից քոլեջը կարևորում է նաև մասնագիտական ՊԿՉ-երում առկա պահանջները, ինչին համազոր ԷՊՔ-ում դասավանդում են բացառապես համապատասխան մասնագիտություն ունեցող դասախոսներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտություն կա ըստ առանձին մասնագիտությունների և մասնագիտական առարկաների/մոդուլների հստակեցնել դասախոսներին ներկայացվող պահանջները՝ ընդհանրական պահանջներից գնալ մասնավորի, որն ավելի կհստակեցնի վերջիններիս ընտրության և մրցութային գործընթացը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է համարվում, որ քոլեջին հաջողվել է դասալսումներին գործընկերային մոտեցում ցուցաբերելը, միևնույն ժամանակ էլ՝ դասալսումները որպես դասախոսական անձնակազմի գնահատման մեխանիզմ կիրառելը: Սակայն մտահոգիչ է, որ դրանց արդյունքում բացահայտված ոչ բոլոր խնդիրներին են լուծում տրվում: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ուսանողների շրջանում հարցաշարերի միջոցով դասախոսների գնահատումը, սակայն հարկ է ընդգծել, որ դասալումների վերլուծության և հետադարձ կապի ապահովման գործընթացները դեռևս լիարժեք չեն իրականացվում: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասալսումները կարող են ծառայել արդյունավետ գնահատման միջոց, եթե ստանան համարժեք արձագանք և որին կհետևի համապատասխան գործողությունների շղթան:

Գնահատելի է, որ ՈՆԱ կառույցի կողմից իրականացվող 3 անգամյա դասալսումները հնարավորություն են տալիս վերհանել դասախոսի և նրա վարած դասի առավելություններն ու լավարկման անհրաժեշտություն ունեցող կողմերը: Արդյունքում զգալիորեն բարելավվել է դասախոսների աշխատանքը:

Թեև քոլեջը կարևորում է դասախոսների մասնագիտական որակների բարձրացման գործում մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը, սակայն անհանգստացնող է, որ դասախոսների համար քոլեջը մասնագիտական վերապատրաստումներ չի իրականացրել: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ քոլեջն իր վերջին երկու տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով որոշակի գումար է հատկացրել մասնագիտական վերապատրաստումներին, այդուհանդերձ, մասնագիտական վերապատրաստումներ չեն եղել:

Դրական է, որ ԷՊՔ-ի դասավանդողների մեծ մասն հիմնական աշխատողներ են, հատկանշական է, որ դասավանդման գործընթացում ներառված են նաև պրակտիկ դասավանդողներ: Ճիշտ է, վերջիններս քիչ թիվ են կազմում, սակայն գովելի է, որ քոլեջը ձեռնամուխ է եղել եիտասարդ և պրակտիկ դասավանդողների ներգրավմանը: Դրական է նաև, որ աշխատավարձի բարձրացումը երիտասարդ մասնագետներին շահադրդելու, քոլեջում աշխատելու մոտիվացիա է դարձել: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների մեծ մասն ունի առավելագույն ծանրաբեռնվածություն, քոլեջը չունի կադրային ռեզերվ, արդյունքում կարող է վտանգվել կրթական գործընթացի անընդհատությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են դասախոսական անձնակազմի առաջընթացի լավ օրինակներ, սակայն մնացյալ շահադրդման, խրախուսման մեխանիզմներ տարբերակված չեն, ուստի հասցեական խրախուսման մոտեցումները կարող են մոտիվացնել դասախոսներին և աշխատակիցներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, արդյունավետ գործող դասախոսների ընտրության մրցութային կարգ, վերջին տարիներին ներգրավվել են պրակտիկ դաշտից դասախոսներ, անձնակազմը համալրված է երիտասարդ և մասնագիտական ներուժ ունեցող կադրերով, իրականացվում են դասախոսների գնահատման արդյունավետ մեխանիզմներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

ԷՊՔ-ի 2018-2022թթ. ՌԾ-ում ընդգրկված չեն հետազոտության ոլորտում քոլեջի սահմանած հիմնախնդիրները և դրանցից բխող գործողությունները: ԷՊՔ-ի 2023-2028թթ. ՌԾ-ի շրջանակում քոլեջը մասնագիտության կրթական ծրագրերի մրցունակության ապահովման նպատակի տիրույթում նախատեսել է գործողություն, որը միտված է դասավանդման գործընթացում հետազոտական/նախագծային մոտեցման և մեթոդների ներդրմանը, որից ՌԾ-ով ակնկալվող արդյունքն է՝ ուսանողների մոտ հետազոտական աշխատանքներ իրականացնելու հմտությունների ձևավորումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, 2022-2023 ուստարում քոլեջում ներդրվել է նախագծային աշխատանքների իրականացման մոտեցումներ: Նախագծային աշխատանքներ իրականացվում են դիտարկվող ՄԿԾ-ներից 2-ում՝ «Բանկային գործ» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»: Հարկ է առանձնացնել, որ նախագծային աշխատանքները վերջնական ձևավորված նախագծի հիմքով չեն իրականացվում, այլ՝ ռեֆերատիվ կամ կուրսային աշխատանքի ձևաչափով:

Տնտեսագիտության ամբիոնի կողմից հաստատված է «Նախագծային աշխատանքների պատրաստման և իրականացման» կանոնակարգ, որն իր բնույթով նախագծային աշխատանքի տրամաբանության մեջ չէ և ընդհանրության մեջ վերաբերում է ռեֆերատների կատարման ընթացքին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում հստակ չեն տարանջատվում ռեֆերատների, գործնական, կուրսային և նախագծային աշխատանքների կատարման չափանիշները, բովանդակային և կառուցվածքային տարբերությունները: «Հաշվողական

տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում նախագծային աշխատանքները կամընտրական բնույթ են կրում, որոնք նախագծի պլանավորման, իրականացման և ներկայացման ձևաչափին չեն համապատասխանում: Նույն մասնագիտությունում որոշ մոդուլների գծով կուրսային աշխատանքներն իրենցից զուտ առաջադրանք են ներկայացնում, որտեղ բացակայում է հետազոտական, վերլուծական բաղադրիչը: «Բանկային գործ» ՄԿԾ-ի շրջանակում իրականացված նախագծային աշխատանքները ևս ռեֆերատիվ բնույթ են կրում, ուր վերջնական նախագծերը դուրս չեն բերվել: Ինչ վերաբերում է «Բանկային գործ» մասնագիտության կուրսային աշխատանքներին, ապա դրանք ընդամենը 1 կիսամյակի ընթացքում են իրականացվել և մշտադիտարկման արդյունքներով համարվել են անարդյունավետ՝ պայմանվորված դասախոսական կազմի սակավությամբ և նրանց ծանրաբեռնվածությամբ: Ներկայումս կուրսային աշխատանքները հանված են ՄԿԾ-ի ուսպլանից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՄԿԾ-ներին կցված առաջադրանքները և հանձնարարականները հիմնականում տեսական բնույթի շարադրանք են, հետազոտական կարողություններ և ստեղծագործական հմտություններ ձևավորող առաջադրանքները հատուկենտ են:

Որպես հետազոտական բնույթի աշխատանք, ԷՊՔ-ում մեկ դասախոս ունի ձեռնարկ, որով դասավանդում է՝ «Անգլերեն լեզվի ձեռնարկ SS ոլորտի ուսանողների համար», և 1 դասախոս գյուղատնտեսության ոլորտի մի քանի հոդվածներ ունի տպագրված: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների շրջանում հետազոտական բնույթի աշխատանքներ չեն նախատեսվում, բացառությամբ դասախոսներից մեկի, ով մշակում է մասնագիտական վարժությունների ձեռնարկ օտար լեզվից, որը կարող են կիրառել բոլոր ՄԿԾ-ներում:

Ինչպես ԷՊՔ-ի 2018-2022թթ., այնպես էլ 2023-2028թթ.ՌԾ-ում շեշտադրված չեն հետազոտական աշխատանքները որպես առանձին ուղղություն, քոլեջի հետազոտական հետաքրքրություններն արտահայտված են 2023-2028թթ. ՌԾ-ում՝ սահմանված խնդրի մեկ գործողության տեսքով: Առկա չէ հետազոտության զարգացմանը միտված հստակ քաղաքականություն, դրանից բխող կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումներ:

Ներկայումս ԷՊՔ-ում կուրսային աշխատանքներ իրականացվում են միայն «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունից: Փորձագիտական այցից պարզվեց, որ ԷՊՔ-ում կուրսային, նախագծային աշխատանքներ իրականացնելու համար օգտվում են ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի 2008 ուսումնական և հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույցից, սակայն նույնիսկ այդ դեպքում նախագծերի համար քոլեջի կողմից մշակված կանոնակարգը շեղված է այդ տեսակի հետազոտական աշխատանքի բնույթից:

2021-2022 ուստարում որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվել է Տնտեսագիտության և Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման ամբիոնների կուրսային աշխատանքների արդյունավետության գնահատում: Գնահատման արդյունքում վեր են հանվել բազմաթիվ խնդիրներ և բարելավման ուղղություններ: Օրինակ՝ «Բանկային գործ» մասնագիտության կուրսային աշխատանքներում բացակայում են ներտեքստային և այլ հղումները, օգտագործված գրականության ցանկը, էլեկտրոնային աղբյուրները ներկայացված էին միայն աշխատանքի վերջում, պահպանած չէր հղումներ

ներկայացնելու ընդունված սկզբունքները: Այդ ամբիոնի կուրսային աշխատանքները ղեկավարվել են մեկ դասախոսի կողմից, կուրսային աշխատանքների թեմաները միատեսակ են և ընդամենը մեկ մոդուլից են: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ «ՀՏԱՀԾԱ» մասնագիտության կուրսային աշխատանքներում բացակայում են առաջադրված խնդիրների լուծումները և համարժեք եզրակացությունները: Գրախոսված չէր ոչ մի աշխատանք:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ դիտարկվող ժամանակաշրջանի ՌԾ-ով սահմանված չեն հետազոտության ոլորտում քոլեջի առաջնահերթություններն ու հետաքրքրությունները, առկա չէ հետազոտության զարգացմանը միտված քաղաքականություն, դրանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ: Մինչդեռ ողջունելի է՝ նոր ՌԾ-ի կրթական ծրագրերի մրցունակության ապահովման նպատակի տիրույթում նախատեսվել է գործողություն՝ միտված դասավանդման գործընթացում հետազոտական/նախագծային մոտեցման և մեթոդների ներդրմանը, որի արդյունքում ուսանողների մոտ պետք է ձևավորվեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու հմտություններ: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբն արժևորում է, որ քոլեջը 2 ՄԿԾ-ում ներդրել է նախագծային աշխատանքների իրականացումը, սակայն միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ նախագծային աշխատանքները կամընտրական են, վերջնական ձևավորված նախագծի հիմքով չեն իրականացվում, ավելին՝ «Նախագծային աշխատանքների պատրաստման և իրականացման» կանոնակարգն ընդհանուր առմամբ վերաբերում է ռեֆերատների կատարման ընթացքին, նախագծային աշխատանքների իրականացման տրամաբանությունն ընդգրկված չէ կանոնակարգում: Արդյունքում, նախագծային աշխատանքը դուրս է հետազոտական աշխատանքների իրականացման տրամաբանությունից և կրկնում է նույն ռեֆերատներին, որոնք քոլեջում իրականացվում են հիմնականում տեսական-տեղեկատվական մակարդակում:

Անհանգստացնող է, որ քոլեջում հստակ տարանջատված չեն ռեֆերատների, գործնական, կուրսային և նախագծային աշխատանքների կատարման չափանիշները, բովանդակային և կառուցվածքային տարբերությունները, որի արդյունքում հստակ չէ՝ ո՞ր աշխատանքներն են իրենց բնույթով հետազոտական և կարող են նպաստել ուսանողների ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ մի կողմից դրական է դիտարկվում կուրսային աշխատանքների ներդրումն ու իրականացումը գործող 2 ՄԿԾ-ում, մյուս կողմից՝ կուրսային աշխատանքներն իրենցից զուտ առաջադրանք են ներկայացնում, որտեղ բացակայում է հետազոտական, վերլուծական բաղադրիչը: Բացի այդ, «Բանկային գործ» մասնագիտության ուսպլանից հանվել է կուրսային աշխատանքը՝ հաշվի առնելով դասախոսների ծանրաբեռնվածությունը: Ի հավելումն նշյալի, քոլեջի ՄԿԾ-ներին կցված առաջադրանքները և հանձնարարականները հիմնականում տեսական բնույթի շարադրանք են, հետազոտական կարողություններ ձևավորող առաջադրանքները հատուկենտ են: Արդյունքում վտանգված է քոլեջի ՄԿԾ-ների շրջանակում ուսանողների մոտ հետազոտական ու վերլուծական կարողությունների ձևավորումը:

Անհանգստացնող է, որ ընդհանուր առմամբ քոլեջում դասախոսական կազմի շրջանում հետազոտական բնույթի աշխատանքներ չեն իրականացվում, ընդամենը առկա է 1 ձեռնարկ և գյուղտնտեսության ոլորտի մի քանի հոդվածներ: Փորձագիտական խմբի կարծիքով,

հետազոտության ոլորտում խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող է դասախոսներին մոտիվացնել հետազոտություն իրականացնելու գործում:

Դրական է, որ քոլեջում իրականացվում է կուրսային աշխատանքների արդյունավետության գնահատում, փորձագիտական խմբի կարծիքով կուրսային և հետազոտական բաղադրիչ պարունակող այլ աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմների զարգացման և ներդրման պարագայում զգալիորեն կբարելավվի հետազոտական աշխատանքների որակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ն չունի հետազոտական առաջնահերթություններն ու հետաքրքրություններն արտահայտող քաղաքականություն, առկա չեն հետազոտության ոլորտի միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, դասախոսական կազմը շահադրդված չէ հետազոտություն իրականացնելու գործում, ուսանողների հետազոտական կարողություններն և ստեղծագործական հմտությունները ձևավորող առաջադրանքներ գրեթե չկան, ներդրված նախագծային աշխատանքները կամընտրական են և վերջնական ձևավորված նախագծի հիմքով չեն իրականացվում, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն ունի 1935թ.–ին շահագործման հանձնված երկհարկանի, 1878.6 ք/մ տարածքով մեկ մասնաշենք, 1973.4 ք/մ հողատարածք: Հարկ է նշել՝ քոլեջի շենքը ուսումնական գործընթացի իրականացման նպատակով տիպային չէ, այլ՝ հարմարեցված, և առկա են լսարաններ, որոնք չեն համապատասխանում ուսումնական գործընթացի կազմակերպման նորմերին: Քոլեջն ունի ֆուտբոլի, վոլեյբոլի դաշտեր, սպորտդահլիճ, դահլիճ, որոնք բարվոք վիճակում չեն: Առկա է 26 ուսումնական կաբինետներ՝ ներառյալ լաբորատորիները և համակարգչային կաբինետները: 3 համակարգչային կաբինետներում առկա է 26 համակարգիչ, որոնցից միայն 8-ն է ձեռք է բերվել 2022թ-ին՝ քոլեջի արտաբյուջեի հաշվին: Մնացած համակարգիչները տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն: Համակարգչային լսարանները հիմնականում կիրառվում են «Հաշվողական տեխիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանողների կողմից: Քոլեջը ֆիզիկայի լաբորատորիա չունի, իսկ քիմիայի լաբորատորիան բարվոք վիճակում չէ, սակայն լաբորատոր պարապմունքների համար անհրաժեշտ սարքավորումներն ու նյութերն առկա են: Առկա է գրադարան և ընթերցասրահ, ընթերցասրահը ևս ծառայում է որպես լսարան: Քոլեջում գործում է ջեռուցման համակարգ, բուֆետ առկա չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իր արտաբյուջեի հաշվին ձեռք է բերել նոր գույք՝

սեղաններ, աթոռներ, կահավորել է դասախոսների համար նախատեսված հանգստի սենյակը, գործարկել է ջեռուցման համակարգը, վերանորոգել է սանհանգույցը։

«Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից ԷՊՔ ՊՈԱԿ-ի 2023թ. շենքերի և շինությունների վերաբերյալ տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության հետազննության արդյունքներով շինության ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, կապիտալության աստիճանը 3-րդ աստիճան է, հիմնական կոնստրուկտիվ տարրերը ենթակա են շահագործման, նորոգումից հետո։ Համաձայն «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման մեթոդական ցուցումների», շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը գնահատվում է բարձր և անհրաժեշտ է իրականացնել շինության սեյսմազինվածության բարձրացում։ Շինության բնականոն շահագործումն ապահովելու համար «Սեյսմշին» ՍՊԸ-ն նշել է թվով 15 առաջարկ, մասնավորապես՝ իրականացնել հիմքերի ուժեղացում, ապամոնտաժել շինության տանիքածածկը՝ տանիքի կրող կոնստրուկցիաների հետ միասին, իրականացնել հիմքերի ջրամեկուսացում և այլ կարևոր առաջարկներ։ Այդքանով հանդերձ, ըստ եզրակացության, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում ռեսուրսների դիտարկման տվյալներով, 2022թ.-ին քոլեջն իրականացրել է շինության տանիքի վերանորոգման աշխատանքներ՝ փոխարինվել է տանիքածածկը և կրող փայտե կոնստրուկցիաները՝ մասնակի։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին տարիներին ուսանողների թվաքանակի ավելացումը շենքի ծանրաբեռնվածության և անվտանգության տեսանկյունից լրացուցիչ ռիսկեր է պարունակում, և շենքային պայմանների բարելավումը քոլեջի համար առավել քան հրատապ է ու անհետաձգելի։ Եզրակացությամբ ամրագրված վերոնշյալ առաջարկները ծախսատար են և զգալի դրամական միջոցներ են պահանջում։ Քոլեջի եկամուտները սահմանափակ են և ձևավորվում են պետության կողմից տրամադրված պաշտոնական դրամաշնորհներից ու ուսման վարձավճարներից (2022թ. տվյալներով 73% և 23%, 2023թ.՝ շուրջ 70% և 30% հարաբերակցությամբ)։ Փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում քոլեջը դեռևս պետության կամ այլ ներդրողների հետ չուներ շենքային պայմանների բարելավման հստակ համագործակցային ծրագիր։

2021-2022 ուստարիների համեմատ 2022-2023 ուստարում քոլեջում ավելացել է առկա կրթաձևով սովորող ուսանողների քանակը և համապատասխանաբար էլ՝ խմբերի քանակը. 2022-2023 ուստարվա տվյալներով քոլեջն ունի առկա կրթաձևում սովորող 23 խումբ և ռիսկերը գնահատված չեն ուսանողների խմբերի քանակ-լսարանների քանակ օպտիմալ հարաբերակցության տեսանկյունից։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների քանակի ավելացման պարագայում քոլեջը նախատեսում է դասերը դարձնել երկհերթ։

ԷՊՔ-ի 2023թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով ընթացիկ եկամուտներում գերակշիռ մաս են կազմում պետության կողմից տրամադրած պաշտոնական դրամաշնորհները՝ կազմելով 69,6%, մնացած 30,4%-ը կազմում են ուսման վարձավճարներից մուտքերը՝ ձևավորելով արտաբյուջեն։ Ինչ վերաբերում է ծախսային հոդվածներին, ապա հարկ է նշել, որ ծախսերի 97%-ը ընթացիկ ծախսերն են, ուր գերակշիռ մաս է կազմում աշխատանքի վարձատրությունը։ 8,1% չափով ծախսային հոդված է ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության հիմքում քոլեջը առաջնային նպատակ է դրել հնարավորինս բարելավել ուսումնական միջավայրը, ազատ դրամական միջոցներն ուղղել է շենքային

պայմանների անվտանգության ապահովմանը: Քոլեջը նպատակ է դրել վերանայել ֆինանսների բաշխման գործող մոտեցումները և բարելավել դրանք:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ էլ. նամակագրության միջոցով:

Քոլեջն ունի բուժկետ, բուժքրոջ հաստիք, առանձնացված է հատուկ տարածք: Առկա է պահակակետ, տեսանկարահանող սարքեր, քոլեջի տարածքը ցանկապատված է: Հաշվի առնելով անվտանգության բարձր ռիսկի մակարդակը, քոլեջն ապահովված է նորմայից շատ հակահրդեհային անվտանգության լրակազմով՝ կրակմարիչներ, հակահրդեհային վահանակներ: Շենքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար, թեքահարթակը բացակայում է, ապաստարան ևս առկա չէ:

Քոլեջը գնահատել է իր ռեսուրսային բազան, իրականացրել է ներքին գնահատում: Իրականացված հարցման արդյուքներով ուսումնառողների 60%-ն է բավարարված ռեսուրսների ապահովվածությունից, իսկ դասավանդողների՝ 50%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նյութական և ուսումնառության ռեսուրսներրի կարիք ունի, մասնավորապես՝ «Ռեժիսուրա», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված ամակարգերի ծրագրային ապահովում» և «Գյուղատնտեսագիտություն» ռեսուրսատար ՄԿԾ-ներն ապահովված չեն համապատասխան լաբորատորիաներով, սարքավորումներով, նյութական ռեսուրսներով: Դրան զուգահեռ՝ քոլեջը գործընկեր-գործատուների հետ չի իրականացնում ռեսուրսների համատեղ կիրառման քաղաքականություն:

Ըստ ռեսուրսներից բավարարվածության գնահատման արդյունքների՝ ամենաշատը դժգոհ են լսարաններում Wi-Fi կապի հասանելիությունից, համակարգիչների և այլ սարքավորումների առկայությունից, ամենաշատը գոհ են՝ լսարանների ջեռուցումից, դահլիճի կահավորվածությունից, լսարաններին կահավորվածությունից:

Դատողություններ: Փորձագիտական խումբն իր մտահոգությունն է ներկայացնում առ այն, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 2023թ. շենքերի և շինությունների վերաբերյալ տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության հետազննության արդյունքներով ԷՊՔ-ի շենքի ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը՝ բարձր: Վերոնշյալով պայմանավորված՝ փորձագիտական խմբի կողմից քոլեջում անվտանգ ուսումնական միջավայրը գնահատվում է բարձր ռիսկային:

Այդուհանդերձ, փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի գործադրած ջանքերը՝ ուղղված շենքային պայմանների բարելավմանը, ռեսուրսների ձեռքբերմանը, սակայն առկա սահմանափակ ֆինանսական ռեսուրսների և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների բացակայության պարագայում քոլեջը չի կարող ամբողջությամբ իրականացնել շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությամբ նախանշված առաջարկները, որոնք զգալի ծախսային բեռ են քոլեջի համար: Հետևաբար, փորձագիտական խումբը գտնում է, որ առանց պետության կամ կոնկրետ ներդրողների օժանդակության հնարավոր չէ բարելավել քոլեջի շենքային պայմանները:

Փորձագիտական խումբը անհանգստացնող է համարում նաև շենքի ծանրաբեռնվածության և անվտանգության տեսանկյունից ուսանողների թվաքանակի ավելացումը, ուստի շինության

անվտանգության հետ կապված աշխատանքները առավել քան հրատապ են և քոլեջի առջև ծառացած է լուրջ մարտահրավեր։

Փորձագիտական խումբը նշում է, որ ներկա պայմաններում քոլեջն ապահովված է բավարար ուսումնական կաբինետներով, սակայն վերջին տարիներին ուսանողների քանակի ավելացմանը զուգընթաց ուսանողների խմբերի քանակ-լսարանների քանակ օպտիմալ հարաբերակցության ապահովման տեսանկյունից առկա են ռիսկեր, որոնք գնահատված չեն, ինչը կարող է խոչընդոտել քոլեջի կրթական գործընթացների արդյունավետությունը։ Մտահոգիչ է, որ քոլեջի 3 համակարգչային կաբինետներում առկա 38 համակարգիչներից 8-ն է ձեռքբերվել 2022թ., ընդ որում՝ արտաբյուջեի հաշվին, իսկ մյուս համակարգիչներն ունեն տեխնիկական վերազինման կարիք, ինչի արդյունքում կարող է վտանգվել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված ամակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի ռեսուրսային ու ծրագրային վերջնարդյունքների ամբողջական ապահովումը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը արտաբյուջեի հաշվին նոր ռեսուրսներ է համալրում, ինչպես նաև Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության հիմքում դրված է ուսումնական միջավայրի բարելավման գործընթացները, որի արդյունքում դրամական միջոցներ են ուղղվել շենքային պայմանների անվտանգության բարձրացմանը։ ՈՒստի, փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ներդրած ջանքերը՝ շինության անվտանգության աշխատանքների իրականացման տեսանկյունից։

Մտահոգիչ է, որ քոլեջը նյութական և ուսումնառության ռեսուրսների կարիք ունի, մասնավորապես՝ «Ռեժիսուրա», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված ամակարգերի ծրագրային ապահովում» և «Գյուղատնտեսագիտություն» ռեսուրսատար ՄԿԾ-ներն ապահովված չեն համապատասխան լաբորատորիաներով, սարքավորումներով, նյութական ռեսուրսներով։ Շարունակաբար՝ փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը իրականացրել է ռեսուսրներից բավարարվածության գնահատում և ինքնուրույնաբար վեր է հանել այդ կարիքը։ Բացի այդ էլ, քոլեջը գործընկեր-գործատուների հետ չունի ռեսուրսների համատեղ կիրառման քաղաքականություն, որի արդյունքում զգալիորեն կարող են բարելավվել ուսանողների գործնական կարողությունները։

Դրական է, որ առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններից գործում է բուժկետը՝ առանձնացված տարածքով, պահակակետով, տեսանկարահանող սարքերով։ Հատկանշական է, որ քոլեջն ապահովված է նորմայից շատ հակահրդեհային անվտանգության լրակազմով՝ որոշակիորեն նվազեցնելով անվտանգային բարձր ռիսկի մակարդակը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ի շենքի ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը՝ բարձր, անհրաժեշտություն կա անհապաղ իրականացնել շինության սեյսմազինվածության բարձրացում, որի համար քոլեջը ներկա պահին չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ, քոլեջում անվտանգ ուսումնական միջավայրը գնահատվում է բարձր ռիսկային, ռեսուրսատար մասնագիտությունների համար նյութական և ուսումնառության ռեսուրսները բավարար չեն, առկա է ուսանողների խմբերի քանակ-լսարանների քանակ օպտիմալ հարաբերակցության ապահովման խնդիր, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ-ն չի բավարարում չափանիշ 7-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԷՊՔ-ի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ իր գործունեության ամբողջական հաշվետվողականությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության առջև քոլեջն ապահովում է տարեկան հաշվետվությունների միջոցով, իսկ հասարակության առջև հաշվետվողականությունն ապահովում է քոլեջի ֆեյսբուքյան էջի միջոցով: Քոլեջում ներդրված է հաշվետվողականության համակարգ՝ տնօրենի տարեկան հաշվետվություն, ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների ղեկավարների, ցիկլային հանձնախմբերի ղեկավարների, կարիերայի պատասխանատուի հաշվետություններ: Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, քոլեջում առկա չէ հաշվետվությունների կատարման միասնական համակարգ, առկա հաշվետվությունները երբեմն նույնական են ամեն տարվա կտրվածքով: Քոլեջը ջանքեր է ներդնում հաշվետվողականության համակարգը կանոնակարգելու, միասնականացնելու և աշխատեցնելու ուղղությամբ:

Քոլեջի կողմից իրականացվող ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակության շրջանում ապահովում է քոլեջի ֆեյսբուքյան էջը, որն էլ հանդիսանում է գործընթացների ներկայացման հիմնական հարթակը: Ֆեյսբուքյան էջը տրամադրում է տեղեկություն քոլեջի ընթացիկ միջոցառումների, բաց դասերի, դաս-միջոցառումների և ընդունելության գործընթացի մասին, էջն ունի շուրջ 5000 հետևորդ: Քոլեջի վերաբերյալ տեղեկությունը հասարակության շրջանում տարածելու նպատակով պարբերաբար կատարվում են այցեր տարածաշրջանի դպրոցներ և պատրաստվում ու տրամադրվում են բուկլետներ: Քոլեջն ունի նաև կայքէջ, որը գտնվում է զարգացման փուլում: Կայքէջում տեղադրված տեղեկատվությունը բավականին հին է: Առկա է որոշակի տեղեկատվություն քոլեջի և նրա հիմնադրման մասին, ներկայացված է ներքին կառավարման կառուցվածքը, տեղադրված է 2015թ.-ի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների և այլն: Հետադարձ կապի մեխանիզմները թույլ են աշխատում, ունեն բարելավման կարիք, հրապարակումներն իրականացվում են որոշակի պարբերականությամբ:

Քոլեջը, որպես հետադարձ կապի ապահովման միջոցներ, կազմակերպում է բաց-դռների օրեր և քոլեջի աշխատակիցների այցեր հանրակրթական դպրոցներ: Ինչպես նաև քոլեջը հյուրընկալում է բոլոր այն մարդկանց, որոնք հետաքրքրված են քոլեջի գործունեությամբ, ինչպես նաև ցանկանում են իրենց կրթությունը շարունակել քոլեջում:

Փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում փորձագիտական խումբը ներկա գտնվեց «Ծաղկազարդ» տոնի միջոցառմանը, «Ռեժիսուրա» մասնագիտության ուսանողների կողմից բեմադրած Վ.Սարոյանի «Սովյալները» պիեսի ներկայացմանը, որին ներկ էին նաև քոլեջի տարբեր մասնագիտությունների ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակիցներ: Քոլեջը նախատեսում է առևտրայնացնել նմանատիպ միջոցառումները:

Քոլեջն իրականացրել է երեք լրացուցիչ կարճաժամկետ ծրագիր՝ «Մենեջեր», «Հաշվապահ» և «Համակարգչային օպերատոր», որոնք հաստատությանը բերել են լրացուցիչ եկամուտ: 2022-2023 ուստարում կարճաժամկետ դասընթացներ չեն իրականացվել՝ ունկնդիր չունենալու պատճառով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի ներդրված հաշվետվողականության համակարգ, հաշվետվություններ են ներկայացվում ոլորտը համակարգող պետական լիազոր մարմնին, առկա են քոլեջի տնօրենի, բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները, ինչը փաստում է քոլեջի համակարգված և ամփոփված գործընթացների մասին: Միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ քոլեջում հաշվետվությունները միասնական ձևաչափով չեն իրականացվում և ներկայացվում, ինչը որոշակի դժվարություններ կարող է առաջացնել քոլեջի կրթական և տնտեսական գործընթացների ամփոփման և գնահատման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ տարբեր ստորաբաժանումների մասնակցությամբ համագործակցային հաշվետվողականությունը կարող է դրականորեն անդրադառնալ քոլեջի կառավարման համակարգի բարելավման վրա:

Դրական դիտարկում է, որ քոլեջում ակտիվ են հասարակության առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմները, հատկապես՝ հասարակության շրջանում քոլեջի կրթական գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը ապահովվում է ֆեյսբուքյան էջի միջոցով, որով քոլեջի ընթացիկ միջոցառումների, բաց դասերի, դաս-միջոցառումների և ընդունելության գործընթացի մասին տեղեկատվության տրամադրումը 5000 հետևորդի շրջանում բարձրացրել է քոլեջից իրազեկվածությունը: Գովելի է, որ պարբերաբար այցերը տարածաշրջանի դպրոցներ, բուկլետների պատրաստումը և տրամադրումը նպաստել են քոլեջի դրական վարկանիշի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ հետադարձ կապի ապահովմանը նպաստող մեխանիզմները իրենց դրական ազդեցությունն ունեն քոլեջի գործընթացների վրա, որն արտահայտվում է վերջին տարիներին քոլեջի ուսանողների թվի աճի միջոցով: Նաև՝ քոլեջի կայքէջը զարգացման փուլում է, և փորձագիտական խմբի կարծիքով հետադարձ կապի մեխանիզմները ևս կգործարկվեն կայքէջի միջոցով: Գովելի է, որ քոլեջն ունի կարճաժամկետ ծրագրեր, պարբերաբար դրանք իրականացնելով՝ ներկայանում է հասարակությանը իր ծրագրերով և ապահովում լրացուցիչ եկամուտ: Սակայն, ունկնդիր չունենալու պատճառով 2022-2023 ուստարում կարճաժամկետ դասընթացներ չեն իրականացվել, ինչի հետ կապված փորձագիտական խումբն իր դիրքորոշումն ունի առ այն, որ այդ ծրագրերի անընդհատությունը քոլեջի համար կարևոր գործընթաց է:

Կարևոր է, որ քոլեջը խրախուսում է տարատեսակ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, բաց է քոլեջի գործունեությամբ հետաքրքրված կառույցների և մարդկանց համար՝ ապահովելով կրթական միջավայրի հասանելիությունն ու հրապարակայնությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ում գործարկվում են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, առկա են քոլեջի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու ակտիվ մեխանիզմներ, քոլեջի գործունեությամբ հետաքրքրված կառույցների և մարդկանց համար ապահովված է կրթական միջավայրի հասանելիությունն ու հրապարակայնությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշի 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ԷՊՔ-ն արտաքին քաղաքականության իրականացման համատեքստում որդեգրել է արտաքին համագործակցությունների և արտաքին շահակիցների շարունակական ավելացման մոտեցում: Արտաքին կապերի ամրապնդումը, ընդլայնումը և միջազգայնացումը քոլեջի 2023-2028թթ. Ռազմավարական ծրագրի կարևոր ուղղություններից է, ուր որպես ակնկալվող արդյունք նախատեսվում է նոր գործընկերների ձեռքբերումը և համագործակցության իրականացումը, միջազգայնացման գործընթացի համակարգումը: Նշյալ միջանկյալ արդյունքների համար պատասխանատուներ են սահմանված քոլեջի տնօրենը, պրակտիկայի վարիչը, կարիերայի պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին երեք տարիներին ավելացել է քոլեջի գործընկեր կազմակերպությունների թիվը, կնքվել են պայմանագրեր, հուշագրեր, որոնց շրջանակում ավելացել են պրակտիկաների բազաները՝ 12-ից դառնալով 31: ԷՊՔ-ն համագործակցում է տարածաշրջանի պետական և մասնավոր կազմակերպությունների հետ, մասնավորապես Վաղարշապատի համայնքապետարանի, Միասնական սոցիալական ծառայության Վաղարշապատի տարածքային կենտրոնի, ՀՀ ԷՆ Երկրագործության գիտական կենտրոնի, Հայ միասնության խաչի (Մաչանենց թատրոն), ԱՐՓԻՆԵՏ ՍՊԸ-ի, տարածաշրջանում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի, սպասարկման, առևտրի ոլորտի կազմակերպությունների և այլ կազմակերպությունների հետ: Առկա են համագործակցության համապատասխան պայմանագրեր և երեք համագործակցության հուշագիր:

ԷՊՔ-ն ուսանողների համար իրականացնում է մասնագիտական էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր՝ ՀՊՏՀ, ՀԱՊՀ քոլեջ, Հայաստանի եվրոպական համալսարան, ԵՊՀ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Սինոպսիս ընկերություն և մի շարք այլ կազմակերպություններ: Արտաքին կապերի և միջազգայնացման գծով առանձին աշխատակից քոլեջը չունի:

ԷՊՔ-ն իրականացրել է փորձի փոխանակման այց Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ, ինչի արդյունքում կատարվել են փոփոխություններ «Հաշվողական տեխիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլներում:

Քոլեջում մեկնարկել է «Մասնագիտական կողմնորոշում և կրթություն» գերմանական ծրագիրը, որի շրջանակներում տեղի է ունենալու Գերմանիայի Լայպցիկի արհեստագործական պալատի հետ համագործակցություն, այն միտված է անձնակազմի կարողությունների զարգացմանը և դրան համահունչ փորձարարական ծրագրի իրականացմանը: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, ծրագրի շրջանակում ԷՊՔ-ի տնօրենը այցով եղել է Լայպցիկում, նախատեսվում է նաև ուսումնական գծով փոխտնօրենի և կարիերայի պատասխանատուի այցը՝ փորձի փոխանակման նպատակով: ԷՊՔ-ն մասնակցում է ERASMUS+ գրասենյակի կողմից կազմակերպված

տեղեկատվական առցանց հանդիպումներին և նպատակադրված է տարածաշրջանի քոլեջների հետ հանդես գալ համատեղ ծրագրով:

Քոլեջը համագործակցային կապեր է ստեղծել «Բիզնես և կրթություն գործընկերություն հիմնադրամ»-ի հետ, որի արդյունքում նախատեսվում է իրականացնել պիլոտային/փորձարարական ծրագիր: «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի և «Բիզնես և կրթություն» հասարակական կազմակերպության հետ ԷՊՔ-ն կնքել է հուշագիր:

2023 թվականի փետրվարին քոլեջի որակի պատասխանատուն և կարիերայի խորհրդատուն հանդիպում են ունեցել Հայաստանում Ճապոնիայի դեսպանի հետ ներդրումային ծրագրերում քոլեջը ընդգրկելու կապակցությամբ:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ ռուսաց լեզվի իմացության մակարդակը վարչական և դասախոսական կազմի շրջանում բարձր է, իսկ անգլերեն լեզվինը՝ ցածր: Ուսանողների շրջանում հակառակ պատկերն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանողների մասնագիտական օտար լեզվի տիրապետման մակարդակը բարձրացնելու համար ներդրվել է 36 ժամանոց «Մասնագիտական օտար լեզու» ընտրովի առարկան: Դասախոսների շրջանում անգլերենի տիրապետման մակարդակը բարձրացնելու համար վերջին տարիների կտրվածքով իրականացվել են դասընթացներ, որն, ըստ տնօրենի, շարունակական բնույթ են կրելու:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում արտաքին կապերի ընդլայնման և տարեցտարի ավելացող գործընկերային հարաբերությունների հաստատման ուղղությամբ քոլեջի որդեգրած քաղաքականությունը, կատարած քայլերը, ինչի արդյունքում ավելացել են պրակտիկայի բազաները՝ նպաստելով ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը նաև արժևորում է, որ քոլեջը համագործակցում է Վաղարշապատի պետական և մասնավոր տարատեսակ կազմակերպությունների հետ, որի արդյունքում ամրապնդվել է քոլեջ-գործատու փոխգործակցությունը:

Հատկանշական է, որ քոլեջն իրականացնում է մասնագիտական էքսկուրսիաներ և ճանաչողական այցեր, որոնք կարող են նպաստելուսանողների շրջանում ընտրած մասնագիտության նկատմամբ հետաքրքրվածության բարձրացմանը, բացի այդ հիմք են նմանատիպ ՄԿԾ-ների համեմատության համար և լավ փորձը ներդնելու լավ հնարավորություն են:

Գովելի է, որ ԷՊՔ-ն Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ փորձի փոխանակման այցի շրջանակում կատարել է փոփոխություններ «Հաշվողական տեխիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլներում, ինչն այլ քոլեջների հետ շարունակական դարձնելու պարագայում դրականորեն կանդրադառնա քոլեջի հետագա զարգացման վրա:

Թեև միջազգային կառույցների հետ համագործակցության շոշափելի արդյունքներ դեռ առկա չեն, սակայն հատկանշական է, որ ԷՊՔ-ն արդեն որոշակի քայլեր է ձեռնարկել, իրականացրել գործողություններ՝ մասնակցելու միջին մասնագիտական ոլորտին համապատասխան միջազգային նախաձեռնություններին, կնքել է հետագա համագործակցության հուշագրեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ քոլեջի արտաքին կապերի ընդլայնման, միջազգայմացման և այդ ուղղությամբ առաջընթացի համար: Հատկանշական է, որ ԷՊՔ-ում իրականացած դասախոսների օտար լեզվի

իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ գործուն քայլեր են իրականացվում, որը կնպաստի հետագայում դրամաշնորհային ծրագրերի դիմելու և միջազգային համագործակցությունը ակտիվացնելու ուղղությամբ:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ն գործուն քայլեր է իրականացնում գործընկերների թիվն ավելացնելու ուղղությամբ, կնքել է պայմանագրեր և համագործակցության հուշագրեր, համագործակցում է տարածաշրջանի պետական և մասնավոր կազմակերպությունների հետ, իրականացնում է մասնագիտական և ճանաչողական այցեր, միջազգայնացման ուղղությամբ որոշակի աշխատանքներ է իրականացրել՝ փորձելով ձեռքբերել միջազգային գործընկերներ, մասնակցել միջազգային ծրագրերի, կարևորում է ուսանողների և աշխատակազմի շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ-ն բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

ԷՊՔ-ն որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակել է հետևյալ փաստաթղթերը՝ ՈՆԱ աշխատանքային պլան 2021-2022, 2022-2023 ուս. տարիների համար, «Դասալսումների իրականացման ընթացակարգ», «Ֆոկուս-խմբային հանդիպում անցկացնելու ընթացակարգ» և 10 անուն հարցում իրենց վերլուծություններով: ՈՆԱ գործընթացների հիմքում դրված չեն ընթացակարգեր և մշակված քաղաքականություն:

2018-2022 թթ. ՌԾ-ի հիմնախնդիր 2-ում նպատակադրել են կատարելագործել և հզորացնել որակի ներքին ապահովման համակարգը եվրոպական չափանիշներին համապատասխան: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը բարձր նշաձող է սահմանել՝ քոլեջի ՈԱ համակարգում եվրոպական ստանդարտները ներդրված չեն: 2023-2028 թթ. ՌԾ-ի նպատակադրումներից է որակի ներքին ապահովումը և բարելավումը, որոնց համար առանձնացված են գործողությունները, ակնկալվող արդյունքները, պատասխանատուները և կատարման ժամկետները: Ըստ փորձաքննության ՈԱ գործընթացները ըստ էության սկսել են քոլեջում գործարկվել 2022 թվականից՝ նախորդ ՌԾ-ի շրջափուլի ավարտին: Նոր ՌԾ-ում նշվում է, որ որակի ապահովման գործիքների (հարցումներ, ֆոկուս-խմբային քննարկումներ և այլն) կիրառումը թույլ է տվել գնահատել հիմնական գործընթացների արդյունավետությունը, ինչպես նաև բարելավել և համակարգել մի շարք գործընթացներ, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՈՆԱ գործընթացները գտնվում են պլանավորման և

իրականացման փուլում, որոշ առումներով՝ գնահատման փուլում: Ինչ վերաբերում է բարելավումներին, ապա դրանք դեռևս կանոնավոր չեն իրականացվում:

ԷՊՔ-ի ՈՆԱ գործընթացները կազմակերպելու համար քոլեջն ունի որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիք՝ 1 դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատակից, ով իր գործունեությունը ծավալել է 2022 թվականի փետրվարից, բացի այդ մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից իրականացրած վերապատրաստումներին, եղել է «Ուսանողության ձայնը» նախագծի մասնակից, ուսանող-փորձագետ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՈԱ պատասխանատուի հաստիք քոլեջն ունեցել է դեռևս 2017 թվականից, սակայն մինչ 2022 թվականի փետրվարը այդ հաստիքը ֆինանսավորվել է արտաբյուջեի հաշվին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱ գործընթացների իրականացման հետագա փուլերի համար անհրաժեշտություն է առաջանում ներգրավել լրացուցիչ մարդկային ռեսուրս:

Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցները մասնակցում են հարցումներին, ինքնավերլուծության համար տրամադրում են քանակական և որակական տվյալներ: Ներքին շահակիցներից ուսանողները կամավորության սկզբունքով ներգրավվել են հարցումների իրականացման խմբերում՝ ձևավորելով որակի ապահովման ուսանողական համայնք: Ինքնավերլուծության իրականացման գործընթացում ներգրավված են եղել քոլեջի ստորաբաժանման ղեկավարները, դասախոսները՝ հավասարաչափ պատասխանատվությամբ: ՈՆԱ աշխատակցի կողմից 2022 թվականից մշակվել է 10 անուն հարցում՝ «Դասընթացի արդյունավետության գնահատում», «Հանրակրթության բաժնում դասավանդող դասախոսների ամփոփ գնահատում», «Հեռավար կրթության կազմակերպման գնահատում», «Նյութական ռեսուրսների և մատուցվող ծառայությունների գնահատում ուսանողների կողմից», «Նյութական ռեսուրսների և մատուցվող ծառայությունների գնահատում դասախոսական կազմի կողմից», «Ղեկավարի աշխատանքի արդյունավետության գնահատում», «Աշխատակից աշխատանքի արդյունավետության գնահատում», «Պրակտիկայի գործընթացի արդյունավետության գնահատում», «Շրջանավարտների բավարարվածության գնահատում քոլեջում ստացած կրթությունից», «Գործատուների բավարարվածության գնահատում քոլեջի շրջանավարտներից և մատուցած ծառայություններից», «Օտար լեզուների իմացության վերաբերյալ գնահատում անձնակազմի շրջանում», որոնց նպատակն է արտաքին և ներքին շահակիցների ուսումնական և մատուցվող ծառայությունների վերաբերյալ կարիքների վերհանումը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքում վեր են հանվել բարելավան ենթակա խնդիրներ, օրինակ՝ համակարգչային լսարանների ոչ բավարար ծրագրային հագեցվածությունը, ինտերնետ կապի թույլ լինելը, ռեսուրսային անբավարարվածությունը, շենքային ոչ բարվոք պայմանները և այլն:

Կուրսային աշխատանքների մոնիտորինգ է իրականացվել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Բանկային գործ» մասնագիտությունների գծով, մոնիտորինգի եզրակացության համաձայն այդ մասնագիտությունների ուսպլաններից հանվել են կուրսային աշխատանքները՝ մեկ ղեկավար-դասախոս ունենալու պատճառով:

Արտաքին շահակիցներից գործատուները մեկ անգամ են մասնակցել «Գործատուների բավարարվածության գնահատում քոլեջի շրջանավարտներից և մատուցած ծառայություններից», հարցմանը, որոնց մասնակցել են քիչ թվով, սակայն շահագրգիռ գործատուներ, դուրս են բերվել

գործատուների նախնական կարիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած հարցմանը գործատուների քիչ թվով մասնակցությանը, ձևավորվել է երկխոսություն քոլեջ-գործատու ձևաչափով:

Շրջանավարտները նույնպես գնահատել են քոլեջից ստացած կրթության որակը և ըստ վերլուծության արդյունքների՝ աշխատանքային գործունեության ընթացքում ունեցել են թիմում աշխատելու, հաղորդակցման, ժամանակի կառավարման հմտությունների կարիք: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի մշակել նշյալ հմտությունները զարգացնելու միջոցառումներ: Շրջանավարտների հարցումներն իրականացվել են երկու անգամ:

ԷՊՔ-ում որակի ներքին ապահովման գործընթացները մեկնարկել են 2022 թվականից, քոլեջում ՈՆԱ գործընթացները դեռևս պլանավորման և իրականացման փուլում են:

ԷՊՔ-ն 2023 թվականին իրականացրել է 10 չափանիշով ինքնավերլուծություն: Ինքնավերլուծությունն ընդհանուր առմամբ նկարագրողական է, պարունակում է քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ որոշ թվային վերլուծություններ, սակայն կան դեպքեր, երբ կցված հիմքերի և ինքնավերլուծությունում եղած քանակական տվյալների միջև առկա անհամապատասխանություն:

Ներքին և արտաքին շահակիցները քոլեջի մասին տեղեկատվություն կարող են ստանալ քոլեջի ֆեյսբուքյան էջից, կայքէջը մշակման փուլում է: Ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այնտեղ չի հրապարակվում ՈՆԱ գործընթացների մասին տեղեկատվություն, հարցումների արդյունքները, այլ ընդամենը լուսաբանվում է քոլեջի առօրյան, տեղադրվում են նորությունները, հայտարարությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԷՊՔ-ում ՈՆԱ գործընթացների համակարգման և ուղղորդման նպատակով ձևավորվել է նախնական փաստաթղթային հենքը, թե՛ նախորդ և թե՛ ներկայիս ռազմավարական շրջափուլում կարևորվում է որակի ներքին ապահովման համակարգի ստեղծումը և բարելավումը, սակայն անհանգստացնող է, որ ՈԱ գործընթացներում քոլեջը բարձր նշաձող է սահմանել, որի հետևանքով առաջին շրջափուլումդրված նպատակադրումները մնացել են անկատար: Դրական է, որ 2023-2028 թթ. նոր ՌԾ-ում ևս ՈՆԱ բարելավումը դիտարկվում է ռազմավարական առաջնահերթություն, առանձնացված գործողություններով և ընդգծված ակնկալվող արդյունքների շրջանակով, ինչը կարող է նպաստել ՈՆԱ համակարգի զարգացմանը և որակի մշակույթի տարածմանը: Գնահատելի է, որ քոլեջի հաստատիքացուցակով հաստատված որակի պատասխանատուն ունի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների մասնակցության փորձ, ինչը նպաստել է քոլեջում ՈԱ մշակույթի տարածմանը: Դրական է դիտարկվում, որ ներքին շահակիցները հնարավորինս ներգրավված են ՈՆԱ գործընթացներում, արտաքին շահակիցների ներգավվածությունը այդքան էլ շոշափելի չէ, սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որ ձևավորվել է քոլեջ- գործատու երկխոսությունը, ինչը նպաստավոր է ՈՆԱ գործընթացների հետագա զարգացման համար: Բացի այդ, արտաքին շահակիցների ներգրավվածության բարձրացումը կնպաստի աշխատաշուկայի հետ անմիջական կապի հաստատմանը՝ խրախուսելով աշխատանքի վրա հիմնված ուսուցման ներդրմանը և զարգացմանը:

Գովելի է, որ շրջանավարտները ևս ներգրավված են եղել ՄԿԾ-ների որակի գնահատմանը՝ շեշտադրելով աշխատաշուկայի պահանջներին համարժեք որոշ հմտությունների թերացումը:

Մտահոգիչ է, որ քոլեջը դեռևս կրթական ծրագրերի բարելավումներ չի նախատեսել վերոնշյալ հմտությունները զարգացնելու ուղղությամբ, որի արդյունքում կբարձրանա ուսանողների մրցակցային առավելությունը:

Փորձագիտական խումբը արժևորում է ՈՆԱ գործընթացների նկատմամբ վերջին երկու տարվա կտրվածքով քոլեջի դիրքորոշումը, սակայն կարճաժամկետում ՈՆԱ գործընթացների հետագա փուլերի զարգացումն ապահովելու համար լրացուցիչ մարդկային ռեսուրսի անհրաժեշտություն է զգացվում:

Թեև ՈՆԱ գործընթացների համակարգման համար մշակվել և իրականացվել են տարբեր հարցումներ, բացահայտվել են ներքին և սակավաթիվ արտաքին շահակիցների կարիքները կրթական միջավայրի և մատուցվող ծառայությունների վերաբերյալ, առկա են վերլուծություններ, սակայն կարևոր է, որ քոլեջը ամբողջականացնի ՊԻԳԲ շրջափուլը, ինչի արդյունքում ԷՊՔ-ում կամրապնդվի ՈԱ մշակույթը: Փորձագիտական խումբը նշում է, որ թեև ՈՆԱ գործընթացները քոլեջում մեկնարկել են 2022 թվականից, այդուհանդերձ կարճ ժամանակահատվածում քոլեջում ՈԱ գործընթացների հիմք է դրվել՝ թե՛ փաստաթղթային, թե՛ գործառնական: Փորձագիտական խումբը կարևորում է, որ փաստաղթային և գործառնական գործընթացները շաղկապված են և միմյանց տրամաբանական շարունակությունն են, ինչը թույլ կտա ՈԱ գործընթացներում առաջիկայում գրանցել դրական արդյունքներ: Փորձագիտական խմբի հավաստմամբ ՈՆԱ գործընթացների մասին տեղեկատվության տարածումը կայքէջով և ֆեյսբուքյան էջով հնարավորություն կտա բարձրացնել քոլեջի ճանաչելիությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԷՊՔ-ն ՈՆԱ գործընթացների բարելավումը դիտարկում է որպես ռազմավարական առաջնահերթություն, ձևավորված քոլեջ-գործատու երկխոսությունը նպաստում է ՈՆԱ գործընթացների հետագա զարգացմանը, կարճաժամկետում ձևավորվել է որակի ապահովման փաստաթղթային և գործառնական հենքը՝ գրանցելով դրական արդյունքներ, ՈՆԱ գործընթացները շարունակական են և ունեն տրամաբանական շղթա, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԷՊՔ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Չի բավարարում**
8. Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Ամսաթիվ՝ 31.07.2023 թ.

_____ .

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան- 2000թ. ավարտել է ԵրՊՏԻ-ի (ներկայումս՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) Ֆինանսահաշվային ֆակուլտետի «Ֆինանսներ և վարկ» բաժինը, 2002-2004թթ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թթ. աշխատել է ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.-ից աշխատում է Հայաստանի Եվրոպական համալսարանում որպես «Կառավարում» ամբիոնի դասախոս, 2023թ.-ից՝ Հայստանի Եվրոպական համալսարանի Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոնի վարիչ:

Քրիստինե Հակոբյան- 2004 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությունը (մագիստրոս)՝ մեթոդիստ որակավորմամբ: 2015 թ. մասնակցել է ՀՀ ԳԱԱ հետևյալ հեռավար դասընթացներին՝ «Տուրիզմի հիմունքներ»՝ Տուրիզմ մասնագիտությունը, «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն»՝ Մշակույթի մասնագիտություն, «Մարդկային ռեսուրսների կառավարում»: 2005 թ.-ից առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և Տուրիզմի դասախոս: Հեղինակել է՝ մասնագիտական ուսումնական 3 ձեռնարկ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տեղակալների վերապատրաստող է: Մասնակցել է տուրիզմի ոլորտի միջին մասնագիտական 2 ՊԿՉ-ի մշակման և 3-ի վերանայման աշխատանքներին:

Նարինե Մեսրոպյան- 1993 թվականին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ռադիոտեխնիկա մասնագիտությունը, 2010 թվականին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ինֆորմատիկա մասնագիտությունը: 2018 թվականին ճանաչվել է հաղթող ԿԳՄՄՆ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում, ԿԳՄՄՆ ՀՄԿ «Ուսուցիչների ներառող դասավանդման հմտությունների զարգացման» ծրագրի դասընթացավար-մենթոր է: «Դասավանդի՛ր Հայաստան» հիմնադրամի պատվերով մշակել է ՏՀՏ հմտությունների զարգացման վերապատրաստման ինքնուղղորդվող դասընթաց մանկավարժների համար, ինչպես նաև նույն թեմայով վերապատրաստման դասընթացներ է մշակել «Բրիտանական խորհուրդ»-ի, ԿԳՄՄՆ-ի կողմից պարտադիր ատեստավորում իրականացնող մի շարք կազմակերպությունների համար: «Համաշխարհային բանկ»-ի պատվերով որպես փորձագետ վերանայել է հանրակրթական դպրոցի ԲՏՃՄ

առարկաների նոր փորձնական չափորոշիչները և ծրագրերը: Աշխատում է ԿԳՄՄՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հեռավար ուսուցման կազմակերպման բաժնում որպես պետի տեղակալ, հանդիսանում է նույն բաժնի ծրագրերի էլեկտրոնային ուսուցման որակի ապահովման փորձագիտական խմբի ղեկավար: Մշակել և հեղինակել է ՏՀՏ վերապատրաստման դասընթացներ, մոդուլներ, ինքնուղղորդվող դասընթացներ տարբեր կազմակերպությունների պատվերով: 2021-ին որպես փորձագետ վերանայել է ԿԳՄՄՆ-ի կողմից ներդրված ԲՏՃՄ նոր չափորոշիչներն ու ծրագրերը:

Կարինա Գանապետյան- Կարինա Գանապետյան, 2021 թվականին ավարտել է Երևանի Նվեր Սաֆարյանի անվան N164 հիմնական դպրոցը, նույն թվականին ընդունվել և այժմ սովորում է Երևանի Նորայր Աճեմյանի անվան Տարածաշրջանային N2 պետական քոլեջի «Շուկայաբանություն» բաժնի 2-րդ կուրսում: 2021 թվականին ավարտել է Բերդ պարային անսամբլի Գևորգյան կենտրոնի մանկապատանեկական բաժնի 9 ամյա դպրոցը: 2015-2022 թվականներին հաճախել է Երևանի Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցի Դաշնամուրային բաժինը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

15.05.2023թ.-18.05.-2023 թ.

	15.05.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	15:40	16:40	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:50	17:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:00	19:00	60 րոպե

	16.05.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	9:30	10:00	30 րոպե
2.	Հանդիպում ամբիոնների վարիչների, ներառյալ Հանրակրթ.ծրագր. բաժնի ղեկավարի, ցիկլային հանձնախմբերի ղեկավարների հետ	10:00	11:00	60 րոպե
3.	Դասալսումներ	11:10	12:10	60 րոպե
4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչներիհետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	12:20	13:20	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:40	15:40	60 րոպե
7.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի կենտրոնի պատ., պրակտիկայի բաժնի վարիչ, գրադարանավար,	16:50	17:50	60 րոպե

	հաշվապահ, կադրերի բաժնի վարիչ)			
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:00	19:00	60 րոպե

	17.05.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ			9:30	10:00	30 րոպե
2.	Հանդիպում Հանդիպում «Բանկային գործ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտ. համ. ծրագրային ապահովում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների	10:00	11:20	80 րոպե
3.	Հանդիպում Հանդիպում «Բանկային գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտ. համ. ծրագրային ապահովում» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			12:40	13:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում			14:40	15:40	60 րոպե
7.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			15:50	16:30	40 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:40	19:00	140 րոպե

	18.05.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի	11:10	12:00	50 րոպե

	հետ			
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	12:10	13:00	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	17:30	190 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ կատարողական՝ ըստ տարիների: Կամ՝ նախորդ ռազմավարական շրջափուլի արդյունքները:	1
2.	ՌԾ-ի պլան ժամանակացույցներ /և՛ նախորդ ՌԾ-ի, և՛ նոր ՌԾ-ի/:	1
3.	ՌԾ-ի պլան ժամանակացույցներ /և՛ նախորդ ՌԾ-ի, և՛ նոր ՌԾ-ի/ Հարցումների, ֆոկուս-խմբերի քննարկումների վերլուծություններ, որոնցից դուրս են բերվել ներքին շահակիցների կարիքները:	1
4.	Կարիքների վերհանման բոլոր գործքների կիրառման արդյունքում վերհանված կարիքները վերջին 5 տարիներին:	1
5.	2023-2028թթ. ՌԾ-ի մշակման աշխատանքներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը հավաստող տեղեկատվություն:	1
6.	Աշխատանքային պլաններնի և՛ տարեկան, և՛ կիսամյակային հաշվետվությունները:	1
7.	Ներքին գնահատման ամփոփումներ, 2019-2020, 2020-2021 ուստարիների ներքին գնահատումներ:	1
8.	2022թ, 2023թ. կնքված և ստորագրված ԿԽ աշխատակարգեր: Առհասարակ՝ բոլոր կանոնակարգերը, ընթացակարգերը և փաստաթղթերը՝ կնքված և ստորագրված վիճակում:	2
9.	2018-2022 ՌԾ-ի գնահատում:	2
10.	Եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվ վերջին 3 տարիների կտրվածքով:	2
11.	Կազմակերպական կառուցվածք: Նախորդը:	2

12.	ԿԽ արձանագրություններ:	2
13.	Տրամադրել վերջին 3 տարիների ֆինանսատնտեսակն գործունեության նախահաշիվները:	2
14.	Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների եւ ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:	2
15.	Տրամադրել արձանագրություններ ՈԱԿ-ի կողմից կատարված հանդիպումների արդյունների մասին:	2
16.	2019-2020, 2020-2021 ուստարիների քոլեջի գործողությունների համալիր պլան:	2
17.	2019-2020, 2020-2021, 2021-2022 քոլեջի գործողությունների համալիր պլանների կատարողականներ, հաշվետվություններ:	2
18.	Ստորաբաժանումների գործողությունների իրականացման արդյունքները 2018-2023 թթ. կտրվածքով:	2
19.	Տրամադրել վերջին 3 տարիների ընթացքում մանխորհի նիստերի արձանագրությունները:	2
20.	Շրջանավարտների շրջանում հարցման արդյունքները: վերլուծություններ:	2
21.	ՈՒսանողների հետազոտական հետաքրքրությունների շրջանակն արտահայտող տեղեկատվություն ըստ 3 ՄԿԾ-ների:	6
22.	Հետազոտական առաջադրանքների փաթեթներ ըստ 3 ՄԿԾ-ների:	6
23.	Հետազոտական բաղադրիչ պարունակող միջոցառումների պլանավորումներ, արդյունքներ՝ եթե կան:	6
24.	ՀՏԱՀԾԱ և Բանկային գործ ՄԿԾ-ների կուրսային աշխատանքների թեմատիկա վերջին 3 տարիների կտրվածքով:	6
25.	ՀՏԱՀԾԱ և Բանկային գործ ՄԿԾ-ների կուրսային աշխատանքների թեմատիկա վերջին 3 տարիների կտրվածքով: Անհատական կամ մասնագիտական ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների, առաջադրանքների թեմատիկա 3 ՄԿԾ-ների գծով, վերջին 3 տարիների կտրվածքով:	6
26.	Նախագծային/հետազոտական աշխատանքների թեմատիկա, աշխատանքներ /3 նածագծային աշխատանք ՀՏԱՀԾԱ-ից/	6
27.	0613 մասնագիտության ուսանողները իրականացրած նախագծային հետազոտական աշխատանքների թեմաները:	6
28.	Ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, դիպլոմային աշխատանենքեր: Թեմաներ	6
29.	Կուրսային և ռեֆերատներ գրելու ուղեցույցեր:	6

30.	Նոր ՄԿԾ-ների ներդրման փաթեթներ, եթե առկա են:	3
31.	Ամբիոնային մասնագիտական քննարկումների ամփոփումներ:	3
32.	Դասալսումների արդյունքում իրականացված բարելավումների փաթեթներ:	3
33.	Դասալսումների գնահատման տարբեր օրինակներ 3 ՄԿԾ-ների գծով:	5
34.	Իրենց սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումներին մասնակցած դասախոսների ցանկ՝ ըստ մասնագիտությունների:	5
35.	2021,2022,2023 թթ, նախահաշիվներ և ֆինանսական հաշվետվություններ:	5
36	Տարիֆիկացիա	5
37.	Դասացուցակ	5.3

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Քոլեջի ուսումնական մասնաշենք

Քիմիայի լաբորատորիա

Ֆիզիկայի լաբորատորիա /Գույք/

Համակարգչային լսարաններ

Լսարաններ

Համակարգչային լսարաններ

Հանդիսությունների դահլիճ

Մարզադահլիճներ

Բուժկետ

Գրադարան

Արխիվ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՈԱԱԿ Որակի ապահովման ազգային կենտրոն
- ՈԱՇ Որակավորումների ազգին շրջանակ
- ՀՀ ԿԳՄՄՆ Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ՊԿՉ Պետական կրթական չափորոշիչ
- ԻՎ Ինքնավերլուծություն
- ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
- ՌԾ Ռազմավարական ծրագիր
- ԶԾ Զարգացման ծրագիր
- ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն
- ՈՆԱԿ Որակի ներքին ապահովում կենտրոն
- ՀԽՍՀ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
- ԳԱՑ Գնահատման առանցքային ցուցանիշներ
- ԿԽ Կառավարման խորհուրդ
- ՈւԽ Ուսանողական խորհուրդ
- ՄԽ Մանկավարժական խորհուրդ